№ 44 ՈՒՐԲԱԹ 28 ՓԵՏՐՎԱՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 28 ՓԵՏՐՎԱՐԻ № 44

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 9 Ր ՈՒՔ

Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը—85 կ.:
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոմ:
ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պիտիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 թ. տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կոմնեան բաժանորդագիր 10 ռուբլին, ԶՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկին ու մէկը. «ԳՐ. ԱՐՇԱՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձին:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Աշոտ քահանայ և իր ամուսին Եւա Յովհաննէսեան ԹԷՄՈՒՐԱՋԵԱՆՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են՝ առաջինը իր եղբօր և երկրորդը իր տգեղ՝ երկրաչափ

ԱԲԳԱՐ ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆ
ԹԷՄՈՒՐԱՋԵԱՆՑԻ

վաղաժամ մահը: Հոգեհանգիստը կը կատարվի հանգուցեալի բնակարանում (որը գտնվում է Բրօսսէ փողոցի վրա, № 6, տուն Այվազեանցի) այսօր, փետրվարի 28-ին, երեկոյեան ժամը 7-ին, իսկ յուղարկաւորութիւնը վաղը, շաբաթ, մարտի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին նոյն բնակարանից դէպի Կաթուղիկէ ս. Առաքածին (ս. Գէորգ) եկեղեցին և այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը:
179. 1—1.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ՉՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.

Այսօր, ուրբաթ, փետ. 28-ին
Մանակց. դերասանների կը ներկայացնէ երկրորդ անգամ ժողովրդի խնդրանքը

ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ

Պատմ. ողբ. 5 գ. Վ. Տիրացեանի

Մասնակցում են—տ. Յասմիկ, օր. Սօլվեան, պ. պ. Ալլահվերդեան, Ամատունի, Բոյաջեան, Գաւրօշ, Երամեան, Եանիկեան, Լազարեան, Հախնազարեան, Մարկոսեան, Յարութիւնեան, Յարութիւնեան II, Ռուսեան, Սերժ, Օհանեան և ուրիշները:
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին:
Տեղերի գները 5 կ.-ից մինչև 50 կ.,
Վարչութեան հրթապահ անդամ՝
Ա. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ
Ռէժիսսեօր՝ Ա. ԱՐՄԻՆԵԱՆ
183. 1—1

Թերթին համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ՊՈՒՔՍԻՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՅՈՒՐԵՐԳՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ԳՆԵՎՄՈՅՈՐԱՅՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների ընութիւնը և լուսանկարները լուսաւորված ԻՆՏՐԻՆՆԵՐՆ ՁԱՆԹՈՒՅՐՆԵՐՈՎ: Ամեն օր. 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. 2ՔԱՂԱՔՈՒՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 2Ր: Бебутовская 23, тел. 7—92
(ա.օ.) առ. 977 100—87

Բ Ժ Ի Շ Կ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների:
Սրսկումն «606»-ի և «914»-ի:
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Ելիզաւէտինսկայա փ. № 39. տ. Զաղէթեանի:
(Չուվ.) առ. 901. 100—47

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Շուշու թեմական դպրոցի հոգաբարձութիւնը մի պատգամաւորութիւն է ուղարկել Էջմիածին, միջնորդելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի և սինոդի առաջ, որ այդ թեմի վանքապատկան կալուածների կառավարութիւնը և շահագործումը յանձնվեն հոգաբարձութեան և նրա արդիւնքները յատկացվեն թեմական դպրոցի և թեմի ծխական դպրոցների պահպանութեան համար:

Այդ միջնորդութիւնը պատճառաբանվում է այն արգումենտներով, որ դեռ Մատթէոս I կաթողիկոսը 1860 թ. իր կոնդակով Ղարաբաղի թեմի բոլոր վանքերի կալուածները տուել է թեմական դպրոցին, իբրև եկամտի աղբիւր նրա պահպանութեան համար, և որ այդ թւից սկսած մինչև 90-ական թուականները թեմական դպրոցի հոգաբարձութիւնն է կառավարել այդ կալուածները և օգտվել նրա արդիւնքներից, երբ Մակար կաթողիկոսի կոնդակով խլվեցին հոգաբարձութեան ձեռքից և յանձնվեցին Էջմիածնին:

Յայտնի է, որ այդ կալուածները—Խոթայ, Գանձասարի, ս. Յակոբի, Ամարասի վանքերի—մի անագին հարստութիւն են կազմում, պարունակելով իրանց մէջ անտառներ, հանքեր, հողեր, արօտատեղիներ, եթէ միայն նրանք շահագործվէին բացիօնալ կերպով: Սակայն թէ հոգաբարձութեան և թէ Էջմիածնի սինոդի կառավարութեան օրով՝ կալուածները չեն տուել այն արդիւնքը, որ սպասելի էր: Իսկ եթէ այդ կալուածները բացիօնալ կերպով շահագործվէին, նրանք այնպիսի անագին արդիւնք և եկամուտ կը տային, որ ոչ միայն թեմական դպրոցը կարող էր բարգաւաճ դրութեան մէջ լինել, այլև թեմում կարելի էր հաբիւրաւոր ծխական դպրոցներ բանալ: Եւ սակայն Ղարաբաղի թեմը այսօր զուրկ է ազգային-ծխական դպրոցներից և թեմի գիւղական ժողովուրդը խարխափում է խորին տգիտութեան և խաւարի մէջ:

Էջմիածինը մինչև այսօր չը կարողացաւ վանքապատկան կալուածների կառավարութիւնը այնպիսի հիմունքների վրա դնել, որ նրանք տային ակնկալված արդիւնքը: Դժուար է ասել, որ նա այսուհետև ևս կարողանայ այդ գործը գլուխ բերել, ուստի դարձեալ միակ միջոցն է՝ կոչել ժողովուրդը աջակցութեան, յանձնել կալուածների կառավարութիւնը ժողովրդի ձեռքը, որա կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով, որ, ներկայ դէպքում, հանդիսանում է թեմական դպրոցի հոգաբարձութիւնը:

Հոգաբարձութիւնն ևս պարտաւոր է կալուածների կառավարութեան համար հրաւիրել հմուտ և մասնագէտ կառավարիչներ և նրանց շահագործումը առաջ տանել բացիօնալ և ժամանակից տեխնիքական ու գիւղատնտեսական գիտութիւնների պահանջած պայմանների հիման վրա: Էջմիածինը կարող է վերին հսկողութիւն ունենալ կամ իր ներկայացուցիչը կարգել կալուածների կառավարութեան վարչութեան մէջ: Կալուածների եկամուտները պէտք է յատկացվեն մի մասը թեմական դպրոցի, մի մասը թեմի ծխական դպրոցների պահպանութեան համար և դրանցից դուրս յաւելեալ մասը յանձնվի Էջմիածնին:

Մեզ թւում է, որ Էջմիածինը պէտք է յարգէ հոգաբարձութեան միջնորդութիւնը և վերականգնէ Մատթէոս I կաթողիկոսի խախտված կոնդակի ոյժը:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
26 փետրվարի

ՎԱՐՇԱՎԱ.—Փլված տան տակից հանեցին 6 ծանր վերաւորվածների և 1 դիակ. մնում են չը հանված 2 հոգի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Այսօր, ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր III կայսրի ծննդեան օրը, Պետրոս-Պողոսի տաճարում կատարվեց հոգեհանգիստ Թագաւոր Կայսրի, Կայսրուհի Մարիա Թէոդորովնայի, Մեծ Իշխանուհիների և Մեծ Իշխանների ներկայութեամբ:

Վախճանվեց գիւղացիական բարենորոգման վերջին գործիչ, Պետ. Խորհրդի անդամ, Կայսերական Աշխարհագրական Ընկ. փոխնախագահ Սեմենով-Տեանշանսկին:

Թագաւոր Կայսրը Մեծ Իշխանուհիներ Օլգա Նիկոլայևնայի և Տատիանա Նիկոլայևնայի հետ, Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչը և Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնան այցելեցին Կայսերական հնագիտական մասնաժողովը և դիտեցին 1913 թ. պեռուլեան զանձան տեղերում պեղումների ժամանակ գտնված հնութիւնները:

ԿԻԵՎ.—Ի լրումն երէկվայ դէպքերի մասին հաղորդվածի տեղեկացվում է, որ ցոյց անելու փորձերը խափանվեցին ոստիկանութեան ջանքերով: Պուշկինեան փողոցում, ուր գտնվում է աւստրիական հիւպատոսարանը, նոյնպէս սկսեց ամբոխ հաւաքվել, բայց ոստիկանութիւնը ցրեց: Ոչ մի ցոյց, ոչ էլ «Կեցցէ՝ Աւստրիա, կորչի Ռուսաստանը» բացագանչութիւններ և ծեծ ու ջարդ չեղաւ: Փողոցներում ոստիկանութեան գործողութիւնները ղեկավարում էր նահանգապետը:

Շեվչենկոյի յօբելեանի ափիթով այսօր ևս փորձեր եղան ցոյցեր անելու, ոստիկանութիւնը կալանաւորեց մի քանի ուսանողների: Բարձր կրթական հաստատութիւններում դասախօսութիւնները ընթացան հանգարտ նօրմալ: Երէկ տեղի ունեցան մօտ 80 ձերբակալութիւններ:

ՐԻԳԱ.—Տաճարում ուկրայնական ընկերութիւնը հոգեհանգիստ կատարեց Շեվչենկոյի յիշատակին՝ լեհ, լիտվ և լատիշ ժողովուրդների և մի քանի ռուսական ընկերութիւնների ներկայացուցիչների ներկայութեամբ:

ՉԱՔԱԹԱԼԱ.—Առաւօտը զգացվեց կարճատև երկրաշարժ ստորերկրեայ զոռացով: Եկեղեցին և շատ տներ ճեղքուածքներ տուին:

ԳՐՕԶՆԻ.—Շպիս նաւթահանքերում խփեց ֆոնտան, որ օրվայ ընթացքում տուեց 100 հազար պուդ նաւթ: Առաւօտս ֆոնտանը այրվեց: Այրուածքներ ստացան 13 մարդ, որոնցից 4 երեխաներ են և 3 կին: Մէկը մեռաւ արդէն:

ՕԴԵՍՍԱ.—Էլեքտրաքարշի մի վագոն դէպաւ այն աւտոմոբիլին, որի մէջ նստած էին զօրաբանակի հրամանատար Բոմանէնկօ, զօրաբանակի շտաբի պետ գեներալ Կուզնէցով և հրամանատարի ադիւտանտը: Երեքն էլ նետվեցին աւտոմոբիլի միջից և ստացան վէրքեր. աւելի լուրջ՝ Կուզնէցովը:

ԿԻՇԻՆԵՎ.—Ակկերմանի գաւ. Տատարբունարում հասարակական համախոսակցով վճռված է փակել ոգելից ըմպելիքներ վաճառող բոլոր հաստատութիւնները: Որոշված է 5 ռուբլով տուգանել նրան, ով կերևայ փողոցում արբած:

ՊԱՐԻԶ.—Պատգամաւորների պալատ: Դէլոնկլը հաւանութիւն է տալիս Դումէրգի այն յայտարարութեան, թէ աւստրիական կայսրը արժանի է գովասանքի յօգուտ խաղաղութեան գործելու համար, և պահանջում է վերականգնել դիւանագիտական յարաբերութիւնները Վատիկանի հետ, որ անհրաժեշտ է Ֆրանսիայի ազդեցութիւնը Արևելքում պահպանելու համար: Կոնշէնը միանում է Դէլոնկլին, ասելով որ չի կարելի անտես անել կաթոլիկ եկեղեցու ոյժը: Հռոմը խոստովանում է, որ սպառազինումը աճում է սպառնական չափերով, զինուորական ծախքերի անխուսափելիօրէն ձեռնարկելու է Ֆրանսիան, որպէսզի հարկադրէ հաշի առնել արդարադատութեան ու ճշմարտութեան ձայնը: Հռոմը մատնանշում է Ռուսաստանի չափազանց զարգանալու վրա, որ երկիւղ է ծնում մի քանի երկիրներում: Պատասխանելով Ժօրէսին, Դումէրգը ասաց, որ եթէ բալկանեան աղէտը դրամ խնդրեն, Ֆրանսիան պայման կը դնէ, որպէսզի այդ դրամները չը գործադրվեն ռազմի նպատակների վրա: Ժօրէս պահանջում է թոյլ չը տալ էնոյլ չինական փոխառութիւնը: Դումէրգը պատասխանում է, որ կը համաձայնվի միջազգային համաձայնութեանը:

Պատասխանելով ձախակողմեաններին, Դումէրգն ասում է, որ կառավարութիւնը ձգտում է պահպանել ու զարգացնել ֆրանսիական ազդեցութիւնը Հեռաւոր Արևելքում: Ապա Դումէրգը յայտնեց, թէ կառավարութիւնը Թիւրքիայից հաւաստիացումն է ստացել, որ նա անկեղծօրէն ցանկանում է պահպանել խաղաղութիւնը, որպիսի անկեղծ ցանկութեան նկատմամբ հիմք չը կայ կասկածելու:

ԼՕՆԴՕՆ.— Ազգային պատկերասրահը փակվեց անորոշ ժամանակով սուֆրաժիստուհի Բիչարդսօնի վարմունքի պատճառով:

Համայնքների պալատում զինուորական մինիստրը յայտնեց, որ կառավարութիւնը Մեսոպօտամիայում ունի 121,000 զինուոր, Մեսոպօտամիայից դուրս՝ 117,000, բացի դրանից՝ կան պահեստի 146,000 զինուոր. զօրահաւաքի դէպքում ամենակարճ ժամանակվոջում կարելի է կազմել 162,000 հոգուց բաղկացած արշաւախումբ:

Թուրքի ժամանակ մահացան երկու օֆիցէր:

ԲԵՐԼԻՆ.—Կայացաւ Ռուսաստանն ուսումնասիրող գերմանական ընկերութեան առաջին հրապարակային նիստը: Ընկերութեան նախագահ ընտրվեց դուքս Տրաքէնֆէլդ: Նիստին ներկայ էին ռուսաց դեսպանը և դեսպանատան պաշտօնեաները: Կարդացվեցին երկու զեկուցում. ճարտարապետ Շերամբրանդը՝ ռուսական շինարարական արուեստի մասին, պրոֆ. Վալիքը՝ ռուսաց եկեղեցական տիպի մասին: Զեկուցումները մեծ աջողութիւն ունեցան:

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—«Պէստի-Նապլոն» վկայում է, որ ռուս-գերմանական բանակուի մէջ պրօվոկատոր կողմ հանդիսանում է ոչ թէ Ռուսաստանը, այլ Գերմանիան, որ անլուր դարձուածքներով ստիպում է Եւրոպային կատարել անտանելի զինուորական ծախքեր: Գերմանական արդիւնաբերութիւնը կարիք ունի գրաւելու նոր շուկաներ, այդ պատճառով Գերմանիան գիտէ, թէ ինչի՛ համար է նա զինվում. բայց Ունգարիան չը գիտէ այդ և մելիոններ է շպրտում յանուն Գերմանիայի:

«Մաշեար-Օրլաբը» գրում է. «Գերմանիայի դաշնակցութիւնը այժմեան ձևով վտանգաւոր է միապետութեան համար: Աւստրօ-Ունգարիան չը պէտք է այլ ևս մնայ Բերլինի աւանդատու: Այն ամենը, ինչ որ անում է Ռուսաստանը, հանդիսանում է սոսկ պատասխան աւստրիական և գերմանական պրովոկացիային: Ռուսաստանը չէ մտածում պատերազմելու մասին, եթէ նրան չը դրդեն պատերազմելու: Թող Վիեննայում յայտնի լինի, որ անկախ ունգարական հասարակական կարծիքը տեսութեամբ է նայում հակառուսական թունալի արշաւանքի վրա»:

ՀՌՕՄ.—Մամուլի մէջ և պարլամենտական շրջաններում եռանդով խօսվում է ստեղծված դրութեան մասին: Տալիս են առաջարկներ մինիստրական պաշտօնների համար: Լիվիայի վրա կատարված ծախքերի քննութեան ժամանակ պարզվեց, որ բիւջէն փակվելու է դեֆիցիտով: Հէնց այդ հանգամանքն էլ դարձաւ կաբինէտի հրաժարականի պատճառը և որոշում է ապագայ մինիստրութեան բնաւորութիւնը, որի մէջ գլխաւոր դերը պատկանելու է ֆինանսագէտներին: Այդ պատճառով պրեմիէրը լինելու է պետական գանձատան մինիստրը:

Թագաւորը մինիստրական ճգնաժամի առիթով խորհրդակցեց սենատի և պատգամաւորների պալատի նախագահների հետ:

ՏՕԿԻՕ.—Արտաքին գործերի մինիստրը գրաւոր կերպով պատասխանեց ստորին պալատում ուղղված հարցապնդման, որ կառավարութիւնը Ռուսաստանի ձեռնարկութիւնները Արտաքին Մոնգոլիայում և Անգլիայի ձեռնարկութիւնները Տիբէտում ճանաչում է Չինաստանի անձեռնմխելիութեան սկզբունքը չը խախտող և տերիտորիալ փոփոխութիւններ առաջ չը բերող:

ԹԻՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
26 փետրվարի

Կ. ՊՕԼԻՍ.—Ֆինանսների մինիստր Բիֆատ-բէյը հրաժարական տուեց: Մինիստրութիւնը կառավարելու է մինչև Զավիդ-բէյի գալուստը ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյը:

Հասարակական աշխատանքների մինիստր Զէյմալ-փաշան նշանակվեց ծովային մինիստր:

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պօլսից տեղեկացնում են. «Հասարակութեան մէջ շատ է խօսվում, որ ընդհատումներ են տեղի ունենում անձնական հողի վրա Թիւրք օֆիցէրների և գերմանական զինուորական միսսիայի մի քանի անդամների միջև:

«Գաւառներից գանգատներ են ստացվում պատրիարքին մահմեդականների դէմ, որոնք, բօյկոտի ենթարկելով քրիստոնեայ վաճառականներին, յորդորում են ազգաբնակութեանը ապրանք գնել միմիայն մահմեդական և հրէայ առևտրականներից: Բօյկոտն արտայայտվում է նոյնիսկ ապրանքները փչացնելով, որոնց վրա բօյկոտիստները նաև թն ածում: Կ. Պօլսի յոյն և հայ առևտրականները մատնանշում են, որ այդ նեղութիւնները ի նկատի ունենալով՝ անհրաժեշտ է յայտարարել մօրատորիում և դադարեցնել եւրոպացի գործարանատէրերի հետ կապված պայմանագրերը: Բացի բօյկոտից, քրիստոնեայ առևտրականները ենթարկվում են դրամաշրջութեան: Դրանում նկատում են այն, թէ Թիւրքերը մը տադիր են հարկադրել քրիստոնեաներին գաղթել Թիւրքիայից»:

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
26 փետրվարի

ՍՕՖԻԱ.—Վերականգնվեցին յոյն-բոլգարական դիւանագիտական յարաբերութիւնները: Յոյն կառավարութիւնը համաձայնեց, որպէսզի Պատարիզը բոլգարական դեսպան նշանակվի Աթէնքում:

ԱԹԷՆՔ.—Կոլօնիա շրջանը առանց միջադէպերի յանձնվեց ալբանական ժանդարմերիային:

ՎԻԵՆՆԱ.—Վալօնից հաղորդում են, որ Ալբանիայի կառավարիչը հոլանդացի մայոր Տօմսօնին նշանակեց Կօրիցա և Արգիրոկաստրօ շրջանների լիազօր, լիազօրեց մտցնել կարգուկանոն և կազմակերպել պատշաճ վարչական մարմիններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՊՕԼՍՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿԸ «ԹԱՅՄԻՆ» ՈՒՂՂՈՒԱԾ

Պարոն.

Մօտաւորապէս մէկ տարի կայ, այն պահուն որ հայկական բարենորոգումներու խնդիրը կը սկսէր նորէն Եւրոպայի առջև դրուիլ, դուք նամակ մը ստացաք, զոր ձեզի ուղղած էի, խնդիրը իր իսկութեան մէջ պարզելու համար, և նաև ճշդելու համար թիւրքահայոց պահանջներու բնոյթը, որոնց դատին պաշտպանութիւնը ստանձնած էի: Հերքելով այն աւելի կամ նուազ ցնորական նպատակները, որոնք կը վերագրուէին իրենց, բացարձակ կերպով յայտարարեցի, թէ հայկական գաւառներու ժողովուրդները մերժելով անջատման կամ ինքնավարութեան աին մտածում՝ կուզեն միայն օսմանցի մնալ, բա՛ է, որ Բերլինի դաշնագրով պայմանաւորուած բարենորոգումներու գործադրութեամբ վերջ մը դրուի աւազակային արարքներու, սպանութիւններու և հողային գրաւումներու, որոնց ենթակայ էին երկար տարիներէ ի վեր, և այս կերպով երաշխաւորուին ապահովութիւնն ու արդարութիւնը, որոնք միայն կրնան թոյլ տալ իրենց աշխատիլ և ապրիլ խաղաղութեան մէջ:

Այսօր, որ, երկար ու աշխատալից բանակցութիւններէ ետքը, համաձայնութիւն մը կը կնքուի պետութեանց և Բ. Դրան միջև, և բարենորոգումները այնքան երկար ատենէ ի վեր և անձկութեամբ սպասուած, պիտի իրականանան, թոյլ կուտա՞ք ինծի, պարոն տնօրէն, «Թայմզի» միջոցով յայտնելու այն զգացումները, որոնցմով բոլոր հայերը տոգորուած են, մտածելով որ նոր դարաշրջան մը պիտի բացուի այս դժբաղդ ժողովուրդներուն համար:

Կուզէի յայտնել մեր ամբողջ շնորհակալութիւնը պետութիւններուն, որոնք, Ռուսիոյ վեհանձնական նախաձեռնութեան վրայ, ձեռք առին մեր դատը, և Ն. Կ. Վ. Սուլթանի կառավարութեան, որ, ընդունելով հայոց ուղղամտութիւնն ու օրինաւորութիւնը իրենց համեստ պահանջներուն,

միևնոյն ժամանակ, կանխահոգ և քաղաքական բարձր նշանակութիւն ունեցող ընթացքով մը վանեց վանդ մը և ազատեց արևելեան գաւառներու ժողովուրդները երկար տենչ ի վեր անոնց կրած անհանդուրժելի և անիրաւ տառապանքներէն։

Միայն մենք չէ որ պէտք է ուրախանանք, որովհետև մեր բարենորոգումներու խնդիրը, ինչպէս միշտ յայտարարեցի, միայն մեզ չէր որ կը շահագրգռէր. ան առած էր եւրոպական շահու բնոյթ մը, այն օրէն, որ հասկցուեցաւ թէ՝ բարենորոգումներու խնդիրը կապուած էր Ասիական Թիւրքիոյ հողային ամբողջականութեան պահպանման հետ։ Տեղի կայ ուրեմն շնորհաւորելու պետութիւնները, որ անհերքելի համերաշխութեամբ, այն ժամէն սկսեալ, յորում հաձայնութիւն մը գոյացաւ իրենց մէջ, յաջողեցան գործնական արդիւնք մը ձեռք բերել, որուն կարևորութիւնը ընդունելով Եւրոպայի խաղաղութեան համար, չափազանցութիւն մը գործուած չպիտի ըլլար։ Պէտք է յուսալ, որ անոնք պիտի հետևին բարենորոգմանց գործադրութեան, գործելու ներդաշնակութեան, համերաշխութեան միևնոյն ոգիին մէջ, և պիտի ապահովեն ատոր յաջողութիւնը։

Պետութիւնները բոլոր գոհացումները տուին Թիւրքիոյ՝ Բ. Դրան դիւրազգածութիւնը չվիրաւորելու համար։ Այսպէս, անոնք, ետ կենալով բոլոր նահանգները միակ գաւառի մը մէջ միացնելէ, ընդունեցին զանոնք խմբել երկու մասերու մէջ, ինչպէս կը պահանջէր Բ. Դուռը, և միւս կողմէ, եւրոպացի մասնաւոր գործակալներու կողմէ գործադրուելիք իսկական քննչութիւնը, որ հիմն էր մեր պահանջներուն, լքուած է։

Բ. Դուռը ուրեմն կատարեալ գոհացում ձեռք բերաւ այս կէտերուն և ուրիշ կէտերուն վրայ, որոնց մասնաւոր կարևորութիւն մը կընծայէր, և մենք ուրախանալ միայն կրնանք անով որ դիւանագիտութիւնը կրցաւ տալ լուծում մը՝ բոլոր շահերը նկատի առնելով, որ չվտանգէ բարենորոգումներու ոչ գործադրութիւնը, ոչ ալ արդիւնաւորութիւնը։

Հիմա կը մնայ միայն իրականացնել զանոնք, և ես ներքին համոզումը ունիմ թէ Բ. Դուռը, շահագրգռուած ինչպէս հայերը, ատոր պիտի ջանայ լրջորովի։ Որովհետև ոչ ոք պիտի կարենար տարակուսիլ թէ բարենորոգմանց անկեղծ, կատարեալ և անվերապահ գործադրումով մըն է միայն, որ այլևս հայկական խնդիր գոյութիւն չպիտի ունենայ։ Անոնց գործադրութեան դրուելովը, արդարև, ապահովութիւնն ու արդարութիւնը պիտի վերահաստատուին, բնական հարստութիւնները պիտի օգտագործուին և տնտեսական զարգացումը պիտի ապահովուի։ Ամբողջութիւն մըն է առ գործունէութեանց և կոչումներու, որ կը քանային և որ կայսրութեան ի սպաս կը դրուին, մէկ խօսքով Թիւրքիոյ վերականգնումն է, որուն համար հայերը, իբր ուղղամիտ հպատակներ և լաւ հայրենասէրներ, պիտի աշխատին իրենց բովանդակ խելքովը և բոլոր այժերովը։

Նախագահ հայկական պատուիրակութեան՝
Պօղոս Նուբար

Պարիզ, 16 փետրվ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«Մշակի» № 40-ում մի վաճառական, առնելով բռնելով այն իրողութիւնը, որ մեր հայկական իրականութեան մէջ յաճախ «հասու բարակ մի գին ունի», որ հասարակական յարգանք մատուցվում է և՛ այն հարուստներին ու կապիտալիստներին, որոնք ի կենդանութեան կամ մահից յետոյ, կտակով, բարեգործութիւններ են արել, և՛ նրանց, որոնք ոչ մի բարեգործութիւն չեն արել, հարց է տալիս, թէ արժէ արդեօք բարեգործութիւն անել, և խնդրում է լուսաբանել այդ խնդիրը։

Այդ վաճառականը հասարակական յարգանք տեսնում է և այն հանգամանքի մէջ, որ ոչ մի բարեգործութիւն չանող միլիոնատէր Ալ. Փրիդոնեանի յուղարկաւորութեան մասնակցել է Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը իր եպիսկոպոսական ատրիբուտներով, մինչ նման պարագաներում Արխատակէս եպիսկոպոս Սեդրակեանը այլ դիրք էր բռնում։

Մեզ թւում է, որ խնդիրը մի քիչ սխալ հողի վրա է դրված, բայց ուրիշ կերպ կարելի էր ձևակերպել։ Օրինակ, փոխանակ հարց դնելու՝ «արժէ արդեօք բարեգործութիւն անել այդպիսի պայմաններում», կարելի էր հարց դնել՝ «արժէ հասարակական յարգանք մատուցանել անբարեգործ հարուստներին»։ Այս՝ առաջին։ Երկրորդ, սխալ է ենթադրել, որ եթէ մի յուղարկաւորութեան մասնակցում է մի եպիսկոպոս, թէկուզ առաջնորդ և մագիստրոս, դրանով միայն հասարակական յարգանք է մատուցվում։ Զէ որ մենք շատ լաւ գիտենք, որ եպիսկոպոսները, ըստ մեծ մասին, առատ աջահամբոյրի, ուրեմն անարդ մամոնայի համար են յարգանք մատուցանում հարուստ ինտելիգենտներին, և դա ևս նրանց եկամուտի աղբիւրներից մէնն է։ Ճիշդ է, եպիսկոպոսի, այն ևս լիտմ. առաջնորդի մասնակցութիւնը ննջեցեալի յուղարկաւորութեան՝ ժողովրդի և վաճառականների աչքում համարվում է յարգանք։ Ճիշդ է, իր կոչման բարձրութեան վրա կանգնած առաջնորդը պէտք է աւելի հեռատեսօրէն և զգուշօրէն գործէ նման դէպքերում և մի քանի հարիւր ռուբլիներից զրկվելը գերադասէ, քան գայթակղութեան առիթ դառնայ. բայց նախ ամեն եպիսկոպոս Սեդրակեան չէ լինի, ամեն եպիսկոպոսից այդպիսի զոհողութիւն պահանջելու իրաւունք չունենք. երկրորդ, միայն եպիսկոպոսի մասնակցութեամբ չէ պայմանաւորվում հասարակական յարգանքը. չէ որ անբարեգործ Ալ. Փրիդոնեանի յուղարկաւորութեանը մասնակցում էին և հասարակական այլ խաւերի ներկայացուցիչներ։

Կրկնում ենք, որ եթէ հարցն այսպէս դրվէր՝ «պէտք է հասարակական յարգանք մատուցանել անբարեգործ հարուստներին», ոչ մի կասկած չը կայ, որ նրա պատասխանը կը լինէր՝ «ոչ, պէտք չէ. պէտք չէ այն պատճառով, որ ամեն մի հարուստ, կապիտալիստ պարտաւոր է այս և այն ձևով վերադարձնել իր կուտակած հարստութեան մի որոշ մասը ժողովրդին, որից նա քաղել է այդ հարստութիւնը»։

Սակայն նամակագիր վաճառականը հարցը դրել է այսպէս. «Արժէ բարեգործութիւն անել, երբ և բարեգործին և անբարեգործին միևնոյն հասարակական յարգանքն է մատուցվում թէ հոգևորականութեան և թէ հասարակութեան կողմից»։

Առանց վարանելու կը պատասխանենք. «Արժէ բարեգործութիւն անել. պէտք է անել»։

Որովհետև բարեգործութիւնը, իբրև քրիստոնէական և մարդասիրական ակտ, պէտք է ըլլան մաքուր սրտի զգացումներից. որովհետև բարեգործութիւն անողը պէտք է ղեկավարվէ ոչ թէ այն նկատումներով, թէ իրան հասարակական յարգանք մատուցվի իր կենդանութեան և մահից յետոյ, այլ այն նկատումով, թէ ամեն մի հարուստի պարտքն է իր ունեցածի, իր՝ յաճախ ոչ-մաքուր միջոցներով կուտակած հարստութեան գէթ մի մասը վերադարձնել ժողովրդին, ստեղծելով նրա համար այս և այն բարեգործական հաստատութիւնը, ամոքելով նրա ցաւերը։

Մենք հասկանում ենք, որ նամակագիր վաճառականի մէջ վերոյիշեալ տարակուսանքը զարթնել է, տեսնելով որ այնտեղ, ուր կրթված հոգևորականը, ինտելիգենտը պէտք է որոշ բարոյական հայեացք ունենար, նա անտարբեր է մնում. մենք հասկանում ենք, որ կրթված հոգևորականի և ինտելիգենտի վարմունքը կարող է յետ կասեցնել տատանվող հոգիները և նրանց ձեռքը մի լաւ զէնք տալ մատնելու, թէ չարժէ բարեգործութիւն անել, քանի որ անբարեգործն ևս, չնորհիւ այն հանգամանքի, որ կարող է առատ աջահամբոյր տալ, արժանանում է յարգանքի։ Բայց, կրկնում ենք, այդպիսի մտորումները բուսական տպաւորութեան արդիւնք են, և երբ աւելի խորը մտածվի, կը գանք այն եզրակացութեան, որ բարեգործութիւնը կամ իր ունեցածից չունեցողներին մաս և բաժին հանելը մարդասիրութեան տարրական պահանջ է։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՒ ԽՐԱՏՆԵՐԻ ԱՐԺԷՔԸ

(Մարքսիստների աշխատակցութեան հարցի շուրջը)

I

«Կովկասի Լրաբերի» խորհուրդներին հետևեց «Հորիզոնի» բարոյախօսութիւնը։

Երկուսն էլ ցաւ ի սիրտ արձանագրում են, որ հայ մարքսիստները հետզհետէ խմբվում են «Մշակի» շուրջը, պարբերաբար աշխատակցում նրան. հէն աշխատակիցներին տրամադիր են հետևել նորերը և այլն։

Ցիշածս օրգանների այդ խրատական վերաբերմունքը դէպի մարքսիստները՝ ամենից առաջ կանգնեցնում է ինձ մի առեղծուածային հարցի առաջ. որոնք են արդեօք այդ նոր, բացայայտ տակտիկի իսկական մոտիվները։ Քսքոյշ հոգատարութիւնը դէպի հայկական մարքսիզմի գաղափարային անաղարտութեան և սկզբունքային հետևողականութեան հարցը։ Բայց «Կովկասի Լրաբերին» և մանաւանդ «Հորիզոնին» չէ վերագահված՝ հայ մարքսիստներին զգուշութեան և հետևողականութեան պարտականութիւնը յիշեցնելու։ Կարելի բան է, ենթադրել, որ ակնայայտնի հակամարքսիստները իսկական մարքսիստական տակտիկի դասերտան հարազատ մարքսիստներին։ Միւս կողմից խելքի մօտիկ բան է, որ վերջինները այնքան թերանան իրանց ընթացքի մէջ, որ մարքսիզմի կազմակերպված թշնամիները դան ու բարեկամական խորհուրդներ տան նրանց՝ հայկական մարքսիզմը փրկելու համար։

Դրէք հարցը ինչպէս կուզէք, անկարող էք գոհացուցիչ լուծում տալ նրան այդ հողի վրա։

Մոտիվները պէտք է որոնել այլ վերնաշարշի տակ թաղված։

Դա անհաշտ թշնամական զգացումն է, դա՝ կուզենայի ասել՝ օրգանական ատելութիւնն է դէպի «Մշակը», որպէս հասարակական օրգան։

Դա այն մտահոգութիւն պատճառող ցաւն է, որ այդ օրգանը փոխանակ ատիճանաբար մեռնելու—ինչպէս ջերմ փափագով սպասում էին նրա թշնամիները — այլ ջանքեր է թափում գաղափարային թարմութիւն մտցնելու իր էջերի մէջ և գուցէ նաև էվոլիւցիոնական թռիչք գործելու յետագայում նորագոյն դեմոկրատիայի անսասան աշխարհահայեացքի հողի վրա։

«Մշակն» ունի իր տէրն ու տնօրէնը, իր ղեկավարն և, կարծում եմ, չունի նա պաշտպանութեան կարիք՝ կողմնակի մարդու միջոցով։

Բայց երբ տեսնում էք հասարակական երևոյթների թիւր ըմբռնումներ, փաստերի գլխիվայր դասաւորութիւն, անկարող էք լռութեամբ անցնել վրայից հէնց ամենից առաջ իբրև մարքսիստ, որի մտածելակերպին միայն վերապահված է փաստերի և երևոյթների ճշգրիտ ճանաչողութեան և օրենքների գնահատութեան էմբենտ կոչումը։

Առաջին հարցը, որ տալիս էք ձեզ «Հորիզոնի» (№ 38-ում) «Մղձուկ արդարացում» խորագիրը կրող առաջնորդողը կարդալուց յետոյ, այն է՝ մթնել յօդուածագրի կոյր ատելութիւնը այնքան է հեռուն գնում ընդդէմ իր հակառակորդ թերթի, որ թոյլ է տալիս իրան չը տեսնված անհեթեթութիւններ հրապարակ նետել, որոնց փաստական պատասխանատուութեան տակից ելնելու ոչ մի հնար չը կայ։ Թւում է, որ իր կոչումը փոքր ի շատէ յարգող մի ժուրնալիստ չը պէտք է փաստի ճշդութիւնը և խստապահանջ տրամաբանական դատողութեան շահը զոհարերէ այն ակնթարթային էֆֆեկտին, որ կարող են պատճառել անտեղեակ և անդիտակից ընթերցողների շրջանում նրա ուռուցիկ չափազանցութիւնները և անհեթեթութիւնները։

Օրինակ, եթէ զուտ աշակերտական հարցաքննութեան ենթարկէք յիշեալ յօդուածի հեղինակին և անողոք ուսուցչի խստապահանջութեամբ ստիպէք նրան մէկիկ-մէկիկ և փաստացի թւել ձեզ այն բոլոր յարև նման կէտերը, որոնք մօտեցնում են «Մշակը» «Новое Время», «Рус. Знамя» և «Земщина» թերթերին, նա կը կարկամէ ձեր առաջ, շատ լաւ գիտելով որ իր իւրաքանչիւր խօսքի համար պիտի պահանջվի նրանից փաստական հիմնաւորումն ու համոզեցուցիչ մեկնաբանութիւն։

Ուրիշ կերպ էլ անկարելի է։

Ներելի է քիչ շատ քաղաքական հասունութիւն ունեցող մէկին՝ համեմատել խորշոր բիւրօկրատական օրգանին, Սուվորինեան երդուեալ պահպանողականութեան տիպար Новое Время»-ին, կամ մինչդարեան խաւարամտութեան և աբսոլիւտ միահեծանութեան սկզբունքների ջերմ ջատագով «Рус. Знамя» և «Земщина» թերթերին մի խեղճ ու ճնշված իրականութեան օրգանի հետ, ինչպէսին կադետական «Մշակն» է։ Թւում է պարզ, տարրական, առելու կարիք չունեցող ճշմարտութիւն պիտի լինէր «Հորիզոնի» համար, որ հայ (ինչպէս և ամեն մի մանր ու ճնշված ազգային իրականութիւն մեր բազմացեղ երկրում) կեանքը հեռաւորապէս անգամ չունի ըստ հող ծառանդ տալու և պահպանելու յիշածս ռուս թերթերի նման օրգաններ։ Անգամ «Նոր-Դարը» չէր կարելի համեմատել նրանց հետ։ Եւ սակայն «Նոր-Դարը» գերեզման մտաւ իր բնական մահով, իբրև այլ ևս վրակաց, աւելորդ օրգան մեր իրականութեան փոխակերպված յարաբերութիւնների տեսակէտից։

Միւս կողմից հարցաքննեցէք «Հորիզոնի» նոյն յօդուածագրին, որ նա մէկիկ-մէկիկ թւէ այն անջատանա-տարբերիչ կէտերը, որոնք հեռացնում են լիբերալ-առաջադիմական «Рус. Вѣд.», «Рус. Слово» և այլ նման թերթերին՝ լիբերալ-առաջադիմական «Մշակից»։

Նա դարձեալ պիտի կարկամէ։ Որովհետև, եթէ նա քննական հայեացքով խորանայ հարցի էութեան մէջ և կարողանայ գէթ մի փոքր զսպել իր ratio-ն մթնացնող կիրքոտ առելութիւնը դէպի «Մշակը», պիտի խոստովանէ առանց այլևայլի, որ հայ լիբերալ օրգանը աւելի ձախակողմեան է, քան ռուսականը։

Ես, մարքսիստս, յայտարարում եմ և հարկ եղած դէպքում կապացուցեմ ամեն մի հորիզոնականի, որ հայ կեանքում (ինչպէս և նման ճնշված իրականութիւնների մէջ) ազատամիտ օրգանները շատ աւելի ձախակողմեան և առաջադիմական են և պիտի լինեն, մանաւանդ համապետական, քաղաքացիական հարցերում, քան տիրող ազգի նոյն ուղղութեան պատկանող օրգանները։

Եթէ այդպէս է, ինչու խեղաթիւրել իրողութիւնը, շփոթել և իրար վրայով տալ անհամեմատելի մեծութիւններ և դատաւորի աքեմա հագած դուրս գալ հրապարակ։

Այդ մի հարցնէք, ընթերցող։

«Հորիզոնին» լաւ յայտնի է իր առաջնորդիայում տիրող տրամադրութիւնը։ Նրան հարկատոր չէ հասարակական ճշմարտութիւնը, այլ ժեստեր ու մանեվրներ, հաճելի էֆեկտներ՝ իր տեղի հակառակորդին վարկաբեկելու համար։

Ահա մի նմուշ հակառակորդի դէմ կռուելու ձևերից մեր կեանքում։

Բայց, ներեցէք, «Հորիզոնը» «բարոյական նօրմաներն» հարց էլ է բարձրացնում։

Անշուշտ խօսքը վերաբերում է հասարակական բարոյականութեան և ոչ անհատական կամ ընտանեկան։

Ի՞նչ ենք լսում այդ հողի վրա։

«Մշակի» համար բարոյական նօրմաներ գոյութիւն չունեն, ասում են մեզ։

Դարձեալ սոսկ ժեստ, դարձեալ կաթեգորիկ յայտարարութիւն, կարծես վաղուց հետէ և ամենքին յայտնի ակսիոմա է կրկնում «Հորիզոնը»։

Բայց դժուար չէ մեզ տողամէջ կարդալ նրա միտքը։

Սրանից 7—10 տարի առաջ տիրում էր թեատրված կովկասահայութեան բոլոր անկիւններում մի հայ կուսակցութիւն, որ բոլորին «զարզանդ» էր ազդում իր հրահանգներով։

«Մշակը», ինչպէս յայտնի է, անխնայ թշնամի էր այդ կուսակցութեան գործելակերպին։ Ներկայ սերունդը յիշում է դեռ ամենայն թարմութեամբ բոլոր չափ ու սահմանն անցած պոլեմիկան մեր այն ժամանակվայ մամուլի մէջ։ Հայ կուսակցութիւնը, որ աբսոլիւտ տէր ու տնօրէնն էր մեր կեանքի, ստեղծեց իրայատուկ բարոյական նօրմաներ իր գաղափարային հակառակորդների համար։

Դաւաճաններ, մատնիչներ, դոնոսչիկներ և այլ նման մարգարիտներ ուղղեց այդ կուսակցութիւնը «Մշակի» ղեկավարների հասցէին։

«Հորիզոնը», որպէս փաստական հաւատարմատար այդ կուսակցութեան հասարակայնացողութեան, կրկնեց և կրկնում է մինչև օրս նոյնութեամբ այդ բարոյական նշանակումները հայ թերթի հասցէին։

Բայց ինչպէս այն ժամանակ, այնպէս էլ այսօր շարվեց փաստական ապացոյցների ամենաթոյլ փորձն անգամ, որպէս զի մենք ևս համոզվէինք այդ նշանակումների իրաւացիութեան մէջ։

Պարոններ, ես մարքսիստս ուղղում եմ ձեզ մի կաթեգորիկ հարց։

Ապացուցէք մեկին ու փաստացի, աներկբայելի գոկումենտներով, որ «Մշակի» ղեկավարները գործել են ձեր վերագրած ծանր յանցանքը։ Համոզեցէք մեզ շօշափելիօրէն այդպիսի մի հասարակական ոճիրի մէջ մամուլի գործիչների կողմից, և այն ժամանակ ոչ միայն կը դադարենք «Մշակին» աշխատակցելուց, այլ և մեր կողմից աւելի կը խտացնէինք բարոյական նշանակումների գոյնը։

Սակայն քանի դուք ոչնչով չարդարացնէք ձեր վերագրումների իմաստը, այնքան կը մնան մեր աչքում «դաւաճան, մատնիչ և դոնոսչիկ» խօսքերը չարամտորէն, կուսակցական հաշիւներով յերիւրած ամբաստանութիւններ դաղափարային հակառակորդների հասցէին։ Եւ թւում է, որ այդպիսի չապացուցված անլուր մեղադրանքների համար աւելի շատ դուք էք, որ պիտի նկատվէք մեր մամուլի անաչառ պատմագրութեան առաջ որպէս բարոյական բոլոր նօրմաների սահմաններն անցած թերթի վարիչներ։

B. Intimus

ԽՕՍԵՑԷՔ ՄԻ ՔԻՉ ԷԼ ՓԱՍՏԵՐՈՎ

Միանգամայն լեզալ, միանգամայն չափաւոր «Հորիզոնն» էլ խօսեց. խօսեց այն դէմօկրատների դէմ, որոնք, չունենալով սեփական օրգան առայժմ, որոշ հարցերի նկատմամբ արտայայտվում են «Մշակում»։ Եւ խօսեց բարոյագիտական տեսակէտը ի նկատի ունենալով...

Համարելով Իրան ազատամիտ ու արմատական ըստ ամենայնի, նա «Մշակը» համեմատում է «Земщина»-ի նման խուլիգանական թերթաւորի հետ, կարծելով որ իր ասածները երկու դէպքում էլ զուտ ճշմարտութիւններ են...

Մեզ սակայն թւում է, որ այսօրվայ «Հորիզոնի» և այսօրվայ «Մշակի» հիմնական սկզբունքների ու դաւանանքների մէջև առանձին տարբերութեան չը կայ. «Հորիզոնի» մարդիկ նոյնքան էջմիածնի հարազատ զաւակներն են, որքան և հակառակ բանակինը։ Հորիզոնականները երբէք չեն խորշել ֆարաջայից։ Եթէ «Մշակը» ունի իր մի ուրկայացուցիչը էջմիածնում, «Հորիզոնը» ունի երկուսը։ Սկզբունքը չէ ժխտվում, և հայկական տիրացութեան խոշոր տակոսից զուրկ չէ իրան արմատական համարող այդ թերթը։ Ինչու թաքցնել։

«Մշակը», որին մենք աշխատակցում ենք, իր սկզբունքներով ու դաւանանքներով համարում ենք հետևող ռուսական կադետական թերթերին և հայ միջավայրին յատուկ գոյնը ունեցող։

Բայց այդ բոլոր առարկութիւնները թողնենք առայժմ. թողնենք և բանակուի այն ձևի հարցը, որ յատուկ է երկու թերթերին ևս միանգամայն հաւասար չափով։

Կայ մի այլ հանգամանք, որ պատասխանատու է դարձնում «Հորիզոնին» մեր աչքում։ Դա այն է, որ նա շատ յաճախ «ազգի դաւաճան», «մատնիչ», «դոնոսչիկ» ածականներն է տուել «Մշակին» և սրա ղեկավարին։ Այդպիսի ծանր որակումներ անելու համար, կարծում ենք, «Հորիզոնը» կունենայ փաստեր, դոկումենտներ։ Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, մենք կարևոր ենք համարում հարցը պարզ կերպով դնել. դա պահանջում է թէ մեր և թէ Իրան բարոյական մաքրութեան նախանձախնդիր ցոյց տուող «արմատական» «Հորիզոնի» շահը։

Որպէսզի այդ որակումները ասէ-կոսէներ և բամբասանք չը մնան, ապացուցէք, որ այդ թերթը իր ղեկավարի հետ «ազգի դաւաճան, դոնոսչիկ, մատնիչ» է եղել, ինչպէս բազմիցս կրկնել էք. բարեհաճեցէք հրապարակ հանել դոկումենտները, փաստերը, որպէսզի մենք ևս փոխենք մեր վերաբերմունքը։

Առանց փաստերի այդ որակումները դատարկ հնչիւններ ենք համարում, որովհետև ազգային որոշ գոյնի թերթերը միշտ էլ մատնութիւն ու դաւաճանութիւն են համարել նոյնիսկ մարքսիստների խիստ յարձակումներն ու քննադատութիւնները այդ թերթերի դէմ։

Համոզմունքից բղխած ամեն տեսակ յարձակում, ամեն տեսակ քննադատութիւն, առնոզոզ ու անխնայ, հակամում և ընդունում ենք, սակայն առանց վերլուծումների ու փաստերի արված եզրափակումները համարում ենք ապարդիւն գործ։ Համոզեցուցիչ փաստեր և ոչ անատամ պառաւի բարբաջանքներ, ինչպիսին էին, օրինակ, Ա. Ղազարեանի ծանծաղ «Մտքերն ու խոհերը» Մարտունու յօդուածի առիթով*)։

Սուրխաթեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Արական գիմնազիա Կարսում
Կարս, 25 փետրվարի

Այս րոպէիս Կարսում կայ 21 պետական դպրոց մօտ 6000 աշակերտներով։

Կովկասի պետական դպրոցների հոգաբարձուն յունվարի 15-ին պաշտօնական թղթով առաջարկել է տեղիս իշխանութեան տեղեկութիւն տալ իրան, թէ Կարսի ազգաբնակութիւնը ցանկանում է ազգայոց գիմնազիա ունենալ և որքան դրամական օժանդակութիւն կարող է հասցնել։ Այս առիթով Կարսի նահանգապետը քաղաքացիներին ամսիս 23-ին հասարակական ակումբում ժողովի հրաւիրեց անձամբ խմբնալու նրանց տրամադրութիւնը։

Հոգաբարձուի պաշտօնական թուղթը կարդալուց յետոյ՝ կարդացին քաղաքիս դեպուտատների կայացրած պաշտօնական որոշումը, որից երևաց, որ քաղաքը տալիս է նոր բացվելիք գիմնազիայի համար մինչև 5000 ռ. և իւրաքանչիւր տարի անխափան 2000-ական ռ. և 1200 սաժէն գետնի շինութեան տեղ։ Նահանգապետը նշեց ծիք յայտնեց, որ քաղաքի ցոյց տուած դրամական օժանդակութիւնը այնքան չը նին է, որ դրանով գործը գլուխ չի գայ։

Այնուհետև սկսեցին խօսել զանազան անձինք և յայտնել զանազան կարծիքներ։ Թեր և դէմ խօսակցութիւնից յետոյ ընտրվեց մի մասնախումբ՝ հարցը առանձին մշակելու և նահանգապետին վերջնական պատասխան տալու։ Այդ մասնախումբը պիտի շրջի վաճառականների մէջ, դիմելու դրամատէր մարդկանց և իմանալու նրանց տրամադրութիւնը, թէ որքան դրամական օժանդակութիւն կարող են հասցնել թէ միանուագ և թէ մշտապէս։ Գրվեցին հեռագիրներ շրջանային գաւառապետներին, որ տեղիկանան մեծ գիւղերի, գիւղաքաղաքների և աւանների ազգաբնակութեան տրամադրութիւնը, թէ կարող են դրամական օժանդակութիւն հասցնել Կարսում բացվելիք գիմնազիայի համար։ Առ այժմ այս գործութեան մէջ մնաց գործը։ Տեսնենք 8 օր յետոյ ընտրված մասնախումբն ինչպիսի տեղեկութիւն կը տայ նահանգապետին։

Աւելորդ չեմ համարում յայտնել, որ Կարս քաղաքը տեղական դպրոցներին դրամական օժանդակութիւն է տալիս իւրաքանչիւր տարի 17,000 ռուբլի։

Սարիբէկ Տէր-Մելքիսեդեկեան

Ծխական ժողով
Քութայիս, 24 փետրվարի

Երէկ, ամսիս 23-ին, պատարագից յետոյ տեղի ունեցաւ ծխականների բազմամարդ ժողով, որին նախագահում էր երկաթուղու ինժեներ Դաւիդով։ Ժողովի նպատակն էր վճռել մի քանի բաւական լուրջ հարցեր։

Հոգաբարձութեան նախագահ Պետ. Բաֆայէլեանի զեկուցումից յայտնվեց, որ դպրոցի շինութեան վերանորոգութեան համար ծախսված է 5,000 ռուբլուց աւելի գումար, որը լրացնելու համար վերցված է բաւական խոշոր պարտք, որի տակ այժմ անքում է հոգաբարձութիւնը շօշափելի տոկոսներ վճարելով։ Ժողովը վճռեց, որ հոգաբարձութիւնը ծախք հանգուցեալ Գվէլէսիանիի նուիրած 3,000 ռուբլու արժէքաւոր թղթերը և մաքրէ պարքը։

Ապա առաջ եկան եկեղեցու՝ Բիսնի ափի փլված պատի նորոգման, զանգակատան շինութեան և հին գերեզմանատան հարցերը։

Երկար թեր ու դէմ խօսելուց յետոյ՝ վճռվեց մի մասնաժողով ընտրել, որը հոգաբարձուների հետ միասին պէտք է մշակէ այդ հարցերը մանրամասն կերպով և իր ամփոփ եզրակացութեան հետ ներկայացնէ առաջիկայ ծխ. ժողովի հայեցողութեան։

Ընտրվեց մի կոմիսիա հետևեալ 7 անձերից բաղկացած. ինժեներ Դաւիդով, ինժեներ Աւսարովիսով, ճարտարապետ Գ. Զարեհեան, Կուզանեան, Ս. Նազարեան, Մամաջանեան և Մ. Մեսրոպեան։

Կոմիսիան վաղը պէտք է ունենայ իր առաջին նիստը։ Աչքի առաջ ունենալով որ ընտրված մարդկանց մէջ կան փորձված բարեմասնութիւնների տէր անձնաւորութիւններ, յոյս կայ, որ գործը բարեյաջող վախճան ունենայ։

Ս. Նազարեան

Գիւղական դպրոցի օրերը
Գիւլագարակ, 13 փետրվարի

Գիւլագարակի հասարակութիւնը 6—7 տարի առաջ ձեռնարկել է մի քարաշէն

*) Հետաքրքրական է իմանալ՝ «Ազատամարտի» և «Դրօշակի» ազատ մտքը Ռուսաստան արգիլուք է ըստկցնել թուլանալու, թէ՞ այդ օրգանները՝ ըստկցիայի պահանջներին համակերպվելու... Ս.

դպրոցական շէնք շինելու, որը սակայն ոչ գեղեցիկ ու նիւթական պակասելու պատճառով կիսատ է մնացել մինչև այժմ։ Ծխական դպրոցի գոյութիւնն էլ ամէն աշնան լինել չը լինելու է ենթարկվում, սենեակ լինել չը լինելու է ենթարկվում։ Ուստի դպրոցական շէնք և եռանդ չը լինելու պատճառով։

Ծխական դպրոցի գոյութիւնը կապահովվի, երբ կունենայ սեփական շէնք։

Հոկտեմբերին, յօբելեանական հանդէսներին, Էջմիածնում դիմում արվեց Վեհ. Ընկ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին միջոցներ հայթայթելու, այդ շէնքը աւարտելու։ Վեհափառը խոստացաւ շէնքը աւարտելու։ Գրել թեմին առաջնորդին հոգալու այդ մասին։ Առաջնորդին ևս քանիցս անգամ դիմում եղաւ հոգաբարձութեան անունից, և ահա անցեալ յունվարի սկզբին, սրբազանը՝ ընդ առաջ գնալով մեր բուռն ցանկութիւններին՝ իր կողմից 100 ր. յատկացրեց այդ նպատակի համար։ Թիֆլիսում գտնվող գիւղագաղակցի աչքի ընկնող 4 երիտասարդներից մասնաժողով ընտրեց, հանգանակութեան թերթեր տուեց և յորդորեց, որ իրանց մասնաւոր շրջանակներում հանգանակութիւն անեն ու գոյացած գումարով հնարաւորութիւն տան սկիզբ դնելու շինարարական աշխատանքներին։ Դժուարը սկիզբ դնելն է, դրանից յետոյ գործը ինքն իրան առաջ կերթայ։

Փայտեղէնը ձրիապէս բաց է թողնվում Մարցի վանքապատկան անտառներից։

Դպրոցական շէնքը բոլորովին պատրաստ լինելու համար պահանջվում է 2500—3000 ր.։ Վերջինս միակն է լինելու Լօռու գիւղերում (չը հաշած Զալալ-Օղլի և Ուզունլար աւանները). և պարծանք գիւղագարակցիներին, որոնք յամառ Ջանքերով 1908 թուից սկսած բացել են ծխ. դպրոց ու պահպանելու են յօրինակ շրջակայ խաւար և օտարասէր գիւղերի։ Ռ. Իսկէնդէրեան

Ուսուցչական սանատորիա Պետերբուրգում

Պետերբուրգ, 22 փետրվարի

Ահա քանի տարի էր՝ Կ. Հ. Բ. Ընկ. տեղական ճիւղի վարչութիւնը ամէն ջանք գործ էր դնում գլուխ բերել սանատորիան, սակայն նա մինչև հնարաւորութիւն չունէր արագ նպատակին հասնելու։

Փետրվարի սկիզբներում պատահաբար իմացվում է Պրավալում գտնվող բժ. Լէվինի դաչայի վաճառման մասին։ Վարչութիւնը յարմար առիթից օգտվելով անմիջապէս գործի է կպչում։ Գնման գործը առջոց էր գնում, երբ կենտրոնական խորհուրդը 3000 ր. տոկոսով յայթայթելով անմիջապէս փոխադրում է, պայմանով որ մինչև օգոստոս վերադարձվի դրամատիրոջը։ Բժշկ. Բուդաղեանը՝ իր անցեալ տարվայ խոստման համաձայն, հէնց մի քանի օր առաջ փոխադրեց վարչութեան 3000 ր.։ Վարչութիւնը ունէր պատրաստի 2500 ր.։ Սպասվում է, որ շուտով կը ստացվի և Մովսէս Բուդաղեանից իր խոստացած 1000 ր.։ Տունը, որ բաղկացած է 16 սենեակներից, գնվեց 23,200 բուբլով, որից 14,000 ր. բանկի պարտքն է, որ անցնում է Կ. Հ. Բ. Ընկ. Պետերբուրգի ճիւղի վարչութեան։ Ընդհ. ժողովը որոշեց հէնց այս տարի հնարաւորութիւն տալ հիւանդներին օգտվելու։

Մ. Մարգարեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Թղթ.)

Պետերբուրգ, 26 փետրվարի

Նախագահում է Ռօճանսկօն։

Շարունակվում է այն հարցապնդման քննութիւնը, որ վերաբերում է Եկվէնկոյի յօբելեանը տօնելու արգելքին։

Զլսէիձէն ընդունում է, որ ուկրայնական շարժումը հանդիսանում է քաղաքական շարժում. նա հետամուտ է ազատելու ուկրայն ժողովուրդը ճորտատիրական վիճակից։ Ուկրայնական շարժումը ապացուցանում է, որ Իռլանդիայի ազգային ազատագրումը և շովինիստ նացիոնալիստների քաղաքականութիւնը անհաշտելի բաներ են։ Այդ նացիոնալիստական քաղաքականութեանը պէտք է վերջ դրվի։ Այդօրինակ վախճանի օրը կը լինի բանաստեղծ քաղաքացու յիշատակի լուսազարդ յօբելեանական օր (ծափահարութիւն ձախից)։

Բուրիանովը գտնում է, որ կառավարութիւնը իր ձեռնարկութիւններով մղում է ուկրայն ժողովրդին դէպի այնպիսի ուղի, որ անհաճելի է կենտրոնին և նացիոնալիստներին և տալիս է նրան լսել երիտասարդութեան, որ երազում է Ուկրայնան անջատելու մասին։

Մի շարք հեռաօրներ խօսում են ըստ ձայնատուութեան։

Մերշին՝ իբրև գիւղացի յայտնում է, որ քուէարկելու է յօգուտ հարցապնդման։ Հեռաօրը յիշեցնում է, թէ ինչպիսի՞ սէր է վայելում Շեվչենկոն Մալաքսիայի ժողովրդական մասսաներում, և յայտնում է, որ նրա յիշատակը տօնելում ոչ մի սեպարատիզմ չը կայ, այլ մի ժողովուրդ կամենում է իր յարգանքը յայտնել իր բանաստեղծին։

Սավէնկօն յայտնում է, որ նացիոնալիստները ձայն են տալու հարցապնդման դէմ, որովհետև գործը վերաբերում է «անկախ Ուկրայնա» ստեղծելու քաղաքական պայքարի մասին, որ նոր քայլ է ներկայանում ի քայքայումն Ռուսիայի։

Մելիկովը պատրաստ է միանալ Ռուսաստանի ամբողջութիւնը պահպանելու կողմերին, բայց ընդգծում է, որ այդ նպատակին հասնելու միջոցները տարբեր են։ Եթէ կան յօգուտ Ռուսաստանի քայքայման աշխատողներ, դրանք ոչ այլ ոք են, բայց եթէ Սավէնկոները և նմանները։ Միակ կանոնաւոր ուղին—այդ ազգային թշնամութիւն չը սերմանելն է։

Պուրիշկեվիչը յայտնում է, որ աջակողմեանները պէտք է ձայն տան հարցապնդման դէմ։

Քուէարկութեամբ ձայների ակնյայտ մեծամասնութեամբ հարցապնդումը ընդունվում է վերջնական խմբագրութեամբ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

✦ Սառցաբանական գործի կոմիտէը առաւարի և արդիւնաբ. մինիստրութեան հրահանգով կազմել է մի բիւրօ, պատրաստութիւններ տեսնելու 1916 թ. միջազգային սառցաբանական կոնգրէս գումարելու համար։ Կոմիտէի խորհուրդը յայտնել է Թիֆլիսի սառցաբանական կոմիտէին, որ յիշեալ բիւրօյի մէջ վերջնիս կողմից ներկայացուցիչ է ընտրված Աւետիս Հ. Քալանթար։

✦ Ներկայումս պոլիտեխնիկումի շինարարական յանձնաժողովը կապալառուներից ստանում է առաջարկութիւններ, որոնցով յայտնում են պոլիտեխնիկումի կառուցման հասար աղիւս, քար և այլ նիւթեր մատակարարելու մասին։ Յանձնաժողովը, ի միջի այլոց, միջնորդութիւն է յարուցել՝ պոլիտեխնիկումի հողի վրա աղիւսի գործարան հիմնելու, որպէս զի աղիւսը էժան նստի։ Պոլիտեխնիկումի հողի մէջ գտնվել է մեծ քանակութեամբ կաւ, որ կը հարկաւորվի աղիւսի համար։ Այդ կաւից և նրանից շինված աղիւս ուղարկված է հետազօտելու։ Եթէ հետազօտութիւնը նպաստաւոր հետևանքների հանի, այն ժամանակ աղիւսի գործարան հիմնելու հարցը կը լուծվի։

✦ Թռչնաբուծութիւն սիրողների կովկասեան ընկ. եռանդագին պատրաստութիւններ է տեսնում թռչնաբուծական ցուցահանդէս կազմելու։ Ցուցահանդէսը կը բացվի Զատկի շաբթին։

✦ Շուշուց գալով էջմիածին գնաց թեմական դպրոցի հոգաբարձութեան մի պատգամաւորութիւն, բաղկացած դպրոցի երկու հոգաբարձուներից և տեսչից՝ միջնորդելու, որ թեմի վանքապատկան կալուածները վերստին յանձնվեն հոգաբարձութեան կառավարութեան։

✦ Գործադուլաւոր հացթուխ ծառայողները երեկ ժողով արին, որի ժամանակ ոստիկանութիւնը ձերբակալեց մօտ 70 հոգի։ Ձերբակալվածները խոստացան դադարեցնել գործադուլը և այդպիսով ազատ արձակվեցին։ Իսկ այսօր արդէն նրանք աշխատում են։

✦ Վերջին ժամանակներս Կուր գետի ջուրը վարարել է և երկիւղ կայ որ աւելի վարարի, այդ պատճառով ձեռք են առնված միջոցներ, որ վնասներ տեղի չունենան։

✦ Կաղետպէի կօրպուսում թունաւորված անձինք բոլորն էլ առողջացել են։ Թունաւորութիւնից պարզվել է, որ այն շաքարահացերը, որոնք պատճառ դարձան թունաւորման, մատակարարված են եղել Ալիխանովի քաղաքաւորների խանութից։

✦ Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը, նպատակ առնելով որ նորոգ հանդուցեալ Ալ. Քրմիշեանը երկար տարիներ վարել է դպրոցում ուսուցչութեան պաշտօն, ամսիս 26-ի նիստին յայտնկայս յարգեց հանդուցեալի յիշատակը և որոշեց նախ՝ ներկայ լսել թաղմանը հոգաբարձական և ուսուցչական կազմով և երկրորդ՝ տանել եկեղեցի երգեցիկ խումբը երգելու պատարագին։

✦ Հաստատ աղբերից մեզ հաղորդում են, որ Դաշնակցութեան գործով մեղադրված Սարգիս Եղիազարեանի պատիժը փոխարկի միջնորդութեամբ ներված և իրաւունքներն էլ վերադարձված են։

✦ Մեզ հաղորդում են, որ Քամոյանց եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը իր նիստերից մէկում քննութեան առարկայ դարձրեց այդ եկեղեցու քահանայ տէր-Յովսէփի քահանայագործութիւնից երկու ամսով դադարեցնելու որոշումը և, գտնելով այդ որոշումն անարդար, վճռեց դիմել կօնսիստորիային և առաջնորդին ու խնդրել վերաքննել գործը։

✦ Մարտի 10-ին, երկուշաբթի օրը Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում Ալեքսանդր Ա. Դլագօլեվ, ժողովարանի անդամների և նրանց ընտանիքների համար կը կարդայ մի դասախօսութիւն Փուտուրիզմի մասին։ Միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտութիւնը վճարելու է միայն տեղերի համար, իսկ մուտքը ձրի է, և այդ այն պայմանով, որ նրանք ներս մտնելու ժամանակ ժողովարանի գրասենեակին ներկայացնեն իրանց դպրոցի վարչութեան կողմից թոյլտուութեան համար տրված գրութիւնը։

✦ Անդրկովկասում մելիօրատիվ համագումար կազմակերպող կոմիտէը մարտի 8-ին լոյս է ընծայելու իր «Բիւլլետէնների» երկրորդ համարը։ «Բիւլլետէնների» խմբագիր է ընտրված ինժեներ Ա. Մ. Էսպէն։

✦ Թիֆլիսի այգեգործական դպրոցի հոգաբարձու իշխ. Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկ հրաժարվել է իր պաշտօնից։

✦ Վարժուհիների միութիւնը մարտի 2-ին, կիրակի օրը, Ժողովրդական Տանը կազմակերպելու է մանկական սինեմատոգրաֆ։

✦ Նահանգապետը թոյլատրել է ս. Կարապետի հայոց ծխական դպրոցի հոգաբարձութեան, եկող ապրիլի 8-ին, բժիշկ Կարապետեանի այգում, զբօսանք կազմակերպել՝ յօգուտ հոգաբարձութեան, իսկ ձրի և էժանագին ճաշարանների ընկ. կոմիտէի վարչութեան՝ ապրիլի 13-ին, Արտիստական Ընկ. ամարային շէնքում նոյնպէս զբօսանք կազմելու, կոմիտէի միջոցներն աւելացնելու համար։

✦ «Հորիզոն» թերթը մի քանի ժամանակ առաջ հաղորդել էր մի լուր, թէ ոմն Երեմեան դիֆֆամացիայի դատ է սկսել «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեանի դէմ «Մշակի» մէջ անցեալ տարի տպված Թաւրիզից գրված մի նամակի առիթով։ Նորերս այդ թերթի մի այլ համարում Վարդան ք. Տէր-Ղևոնդեանը նոյնպէս յայտնեց, որ դիֆֆամացիայի դատ է սկսելու Հ. Առաքելեանի դէմ, որովհետև «Մշակը» արտատպել է «Закавказье» թերթից այդ քահանայի դէմ տպված խիստ անպատուաբեր և անտանելի յօդուածը իր նկատողութիւններով։ Դուրս է գալիս, որ Վարդան քահանան ռուս թերթի տպածը իր մասին ընդունում է, իսկ «Մշակի» դէմ դիֆֆամացիայի դատ է յարուցանում, որովհետև սա իր կողմից մի նկատողութիւն է տպել։ Թէ ինչու «հորիզոնականները», երբ իրանց զրպարտված կամ անպատված են զգում, դիֆֆամացիայի դատեր են սկսում և ոչ զրպարտութեան, քանի որ յայտնի է, որ օրինաւոր և պատուանուէր մարդիկ զգուշանում են դիֆֆամացիայի զէնքին դիմել, մնում է անյայտ։ Այժմ կարող ենք հաղորդել, որ այդ դատերից մինը, այն է Երեմեանի սկսած դիֆֆամացիայի դատը նորերս նշանակված էր քննիչի մօտ, որ, Հ. Առաքելեանի տուած բացատրութիւններից յետոյ, որոշումն կայացրեց դատը դադարեցնել։

✦ Տեղիս վարժուհիների և դաստիարակչուհիների ընկ. որոշել է եկող ապրիլին ծերացած և աշխատանքի անընդունակ գործչուհիների համար ապաստարան բանալ Սաբուրթալոյում, յատկապէս այդ նպատակի համար շինված տանը։ Այդ ապաստարանը մտնելու ցանկութիւն են յայտնել առայժմ 4 հոգի։ Ընկ. արդէն ձեռնարկել է ապաստարանին կից լուսցարան և այգի շինելու։ Ապաստարանը կառավարելու է անտեսական կոմիտեն, որի կազմի մէջ են մտնում ապաստարանը կառուցանող ինժ. Ա. Վ. Ադրիանով, տիկ. Մ. Ա. Բանդզօլց և Ե. Մ Գալիցինսկայա. դրանց փոխանորդներ են ընտրված՝ Ն. Ա. Թումանսկայա և Դ. Ե. Սուլխանովա։

✦ Եղանակները Թիֆլիսում միանգամայն գարնանային են դարձել վերջին օրերս։

✦ Պոլիտեխնիկումի հիմնարկէքը շտապեցնելու պատճառով, տեխնիկական յանձնաժողովը մտադիր է, յատակագծերը գլխաւոր կոմիտեի կողմից հաստատելուց յետոյ (չը սպասելով վերջնական յատակագծին), հողային աշխատանքները նուազուզդի հանել։

✦ Վրիպակ.—«Մշակի» № 42-ի առաջնորդող յօդուածում մի սխալ է սպրդել։ Յօդուածի հէնց առաջին պարբերութեան մէջ ապված «...հայոց ազգ. ժողովի դատը...» խօսքերը պէտք է կարդալ՝ «...հայոց ազգ. ժողովի նիստը...»։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

✦ Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կասսօն պատուիրագրել է Խարկովի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին՝ ձեռք առնել վճռական միջոցներ վերականգնելու զբաղմունքների նորմալ ընթացքը բարձր կրթական հաստատութիւններում։

✦ Պետերբուրգում միջազգային «Կանանց օրը» ռուս կանայք ևս փորձեցին տօնել, սակայն ոստիկանական խմբերը ցրեցին նրանց փողոցներից։ Մի քանի կին կալանաւորված են։

✦ «ԲէկԷ»-ը փետր. 21-ի համարի համար ենթարկվեց 500 ր. տուգանքի։

✦ «Сѣверная Рабочая Газета»-ի խմբագիրը փետր. 19-ի համարի համար տուգանվեց 400 բուբլով։

✦ Շուտով Պետերբուրգում կայանալու է ազնուականների համառուսական համագումարը, որին մասնակցելու են 400 հոգի։ Քննութեան գլխաւոր խնդիրներ լինելու են ժողովրդական կրթութիւնը և հրէաներին զինուորական ծառայութիւնից հեռացնելը։

✦ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, սահմ. ռամկավար ֆրակցիայի մէջ ծագել է երկպառակութիւն։ Մակլակովը առաջարկում է համաձայնութիւն կապել հոկտեմբերեանների հետ օպոզիցիոն պլատֆորմով, թէկուզ դրա համար հարկ լինի անել մի քանի զիջումներ ի վնաս կուսակցական ծրագրի։ Միլիւկովը առարկում է։ Այդ առիթով անկետա է լինելու գաւառի ժամանակցութեամբ։

✦ Մոսկվայաբնակ հայ միլիոնատէր իշխ. Աբամէլիք-Լազարեանը նորից 10,000 ր. է նուիրել՝ տալու իբրև մրցանակ մի օրում Պետերբուրգից Օդեսա թռչելու համար։

✦ Մինիստրների խորհրդի նախագահ Գորեմիկինի կարգադրութեամբ՝ մինիստրները շտապով կազմում են այն օրէնքների ցուցակները, որոնք ներկայացվելու են Պետական Դումային։ Առաջին հերթին դրված են ֆինանսական և կուլտուրական կարիքների նախագծերը։

✦ Պետերբուրգում խօսվում է, որ Գերմանիայի հետ կապված առևտրական պայմանագրի վերաքննութեան ժամանակ՝ առևտրի մինիստրի պաշտօնին է կոչվելու կոմս Վիտտէն։

✦ Պետերբուրգում հաստատ մատնանշում են, որ հէնց որ Կրիվոշէինը վերադառնայ արտասահմանից, նրան կառաջարկվի ստանձնել ներքին գործերի մինիստրի պաշտօնը։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Փետրվարի 26-ին, Զէրքէզօվսկայա փողոցի № 44 տանը, ծխնելոյզի անկանոնութիւնից, հրդեհ առաջացաւ, որը շուտով անցաւ հարևան արհեստաւորների խանութը։ Կրակը հանգցվեց հրդեհաշէջների խմբի ջանքերով։ Վնասը հասնում է 10,150 բուբլու։ Թէ տունը և թէ խանութները ապահովագրված չեն։

✦ Փետրվարի 26-ին, երեկոյեան, անյայտ չարագործի ձեռքով վիրաւորվեց Թիֆլիսի քաղաքացի Իվան Սօլոմոնով Մեհրաբեան (ձկնորս)։ Նա ուղարկվեց Արամեանի հիւանդանոց։ Նրա կեանքը վտանգի մէջ է։

✦ Նոյն օրը, Իվան Մրկիտին յայտնեց ոստիկանութեան, որ իր բացակայութեան ժամանակ իր տնից անյայտ մարդկանց ձեռքով գողացված են 76 ր. 30 կ. արժողութեամբ զանազան իրեր։

ԳԻՏՈՒԹ. ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԿՌԻԻ «606»-Ի ԴԷՄ

Երեք շաբաթ առաջ Բերլինից ստացված մի հեռագիր եկաւ ոչնչացնելու աշխարհահռչակ պրոֆեսոր Էրլիխի գիւտը՝ սիֆիլիսի բուժիչ «606»-ը։ Հեռագրի աղբիւրն էր գերմանացի բժիշկ Դրայվը, որը մի զեկուցագրով պահանջում էր արգելել սալվարսանի («606»-ի) գործածութիւնը, մատնանիշ անելով այդ դեղի թունաւոր յատկութիւնը և հետևաբար երկիւղալի լինելը։

Թէ որքան հաւատալու արժանի է դոկտ. Դրայվի տենդենցիոզ զեկուցումը, մենք կը տեսնենք ներքև բերած փաստերից։

«606»-ի գործածութիւնը մօտ երեք ու կէս տարի է, որի ժամանակընթացքում պատրաստված է աւելի քան երկու միլիոն սրբուակ «606»-ից։ Էրլիխի գիւտի համար՝ ամենուրեք զովեստով են խօսում, միմիայն գերմանացի դոկտոր Դրայվն է, որ մի քանի անգամ փորձած է ոչնչացնելու աշխարհահռչակ գիտնականի մեծ գիւտը։

Մինչև այժմ սրբված հիւանդներից—ոչ ոքին թիւը անշուշտ մի միլիոնից անց է—մահվան դէպք եղած է մօտ 200, և եթէ լաւ ծանօթանալու լինենք, կը տեսնենք որ համարեա բոլոր մահացու դէպքերը եղած են այն պայմաններում, երբ հիւանդը այսպէս թէ այնպէս բոլորովին քայքայված է եղել սիֆիլիսից, իսկ մնացած դիպուածներում ընդհանրապէս «606»-ը յաղթող է հանդիսացել։

Ի նպատակ առնելով հիւանդների այն բոլոր նամակները և հարցումները, որոնք հրապարակ էջան դոկտոր Դրայվի աղմկալից հեռագրի շնորհիւ, աւելորդ չեմ համարում մի քանի խօսքով ծանօթացնելու ընթերցող հասարակութեանը վերոյիշեալ բժշկի անձնաւորութեանը։

Դոկտոր Դրայվը Բերլինի քաղաքային բժիշկ է, որը մի քանի անգամ ճգնած է աշխարհահռչակ անուն ստեղծել. դեռ անցեալ տարի վերոյիշեալ դոկտորը մի աշխատութիւն գրելով՝ ուզում էր արմատականապէս փոփոխութեան ենթարկել բոլոր բժշկական գործիքները. սակայն այս աշխատութիւնը ըստ արժանւոյն ժամանակին քննութեան ենթարկեց և մոռացութեան գիրկն անցաւ։ Ոչ աւելի լաւ վիճակի ենթարկվեց Դրայվի և մի ուրիշ առաջարկութիւնը, որով ուզում էր փոփոխութեան ենթարկել բոլոր լաբորատորիաների կազմութիւնը։

Սալվարսանի—«606»—դէմ քանիցս անգամ դոկտոր Դրայվը կռիւ է սկսել, սակայն ամէն անգամ էլ պարտված է։

Դոկտոր Դրայվը հէնց սկզբից պահանջում էր, որ «606»-ը իբրև թոյն գործադրվի այնպիսի քանակով (դօզա), որքան դա թոյլատրելի է մկնդեղի համար, բացատրելով որ «606»-ը մկնդեղ է։ Ահա այստեղ է կայանում Դրայվի սխալը. պահանջել որ «606» գործածվի այնպիսի դօզայով, ինչպիսին պահանջվում է մկնդեղի գործածութեան ժամանակ, դա հիմնովին սխալ է և աննեղելի մի բժշկի, որ դեռ ևս զուտ գիտական հարցերով է զբաղվում։ Ինչպէս գիտենք, «606»-ը ոչ թէ մաքուր մկնդեղ է, այլ մկնդեղային դեղ, հետևապէս պահանջել որ «606»-ը գործածվի միայն մաքուր մկնդեղի դօզայով, անհիմն է։

Ուրիշ հարց է, եթէ Դրայվը խօսէր բուցիդիվի—հիւանդութեան կրկնման—մասին, որը առանձնապէս նկատելի էր սկիզբներում, երբ բժիշկները մի կողմից թերահաւատութեամբ վերաբերվելով դեղին՝ միւս կողմից էլ վախենալով թունաւորումից ներկսում էին հակառակ Էրլիխի նշանակած դօզային ոչ թէ 0,6, այլ 0,3, երբեմն նոյնիսկ 0,2. անշուշտ այդպիսի քանակը չէր կարող միանգամայն ոչնչացնել օրգանիզմի մէջ տարածված բոլոր մանրէներին, հետևաբար պէտք էր սպասել հիւանդութեան կրկնման։

Այսպէս թէ այնպէս, այսօր, 3½ տարին անցնելուց յետոյ, երբ համայն բժշկական աշխարհը ընդունում է «606»-ի բուժիչ յատկութիւնը, զովասանքի արժանի չէ Դրայվի անտեղի քննադատութիւնը և դրանից առաջացած թիւրիմացութիւնը։

Բժ. Վ. Խաչատրեանց

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական թատրոն

Մեծադղորդ բեկլամը գեղարուեստի տաճարի անունը և տեղը քաղաքավարի կերպով շահագործողների կողմից իր գործը արդէն տեսաւ։ Կովկասի, մասնաւորապէս Թիֆլիսի ժամանցի հասարակութիւնը ոչխարի հօտի նման ընկաւ Արքունական թատրօնի կասսայի վրա և թանգ գներով գնեց յայտարարված մի դիւժին «նորոյթ» օպերէտանների տոմսակները։

Եւ երբ «Մոսկվայի Նեմիրովիչի թատրօնի լիակատար անսամբլը» ցոյց տուեց իր բուվանդակ դատարկութիւնը, այն ժամանակ Թիֆլիսի դիւրահաւան օպերէտասէր հասարակութիւնը զգաց, որ «լեռը մուկ էր ծնել...»։

Թիֆլիսը ամէն տարի Մեծ-Պասի սէզօնին շատ օպերէտային խմբեր է տեսել, որոնք յամենայն դէպս տուել են առողջ իւմօրով, սրամիտ սիւժէով ու օպերէտային ախորժալուր երաժշտութեամբ ներկայացումներ։

Սակայն Պոտոչէնայի խումբը իր կազմով (ի բաց առեալ Թիֆլիսեցիներին ծանօթ կօմիկներ Գրեկովից և Ֆօկինից) և մանաւանդ իր բեպերտուարով կանգնած է միջակ օպերէտային խմբից էլ ցածր։

Փետրվարի 26-ին խումբը ներկայացրեց մի անհամ պիէս ևս «Герой экрана», որի հերոսները միանգամայն վուլգար կերպով ծաղրում են Մեծն Նապոլէօնին, թելադրելով պիէսի անյայտ շովինիստ գերմանացի հեղինակից, որ իր անմիտ գրուածքը հիւսել է Լայպցիգի կուռի մի էպիզոդից, երբ Նապոլէօն Մեծը, ճակատամարտը ղեկավարելիս՝ արկածային դէպք է ունենում Ջրաղացպանի աղջկայ հետ։ Ե.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալցխա, 15 փետրվարի

Պ. Գ. Զալխուշեանն ի զուր է նախատում ախալցխացիներիս։ Ախալցխացիները անհուն վշտով կարդացին նրա մանրակարը, տպված՝ «Մշակի» № 25-ում, ուր նա ի զուր նախատում է մեզ, որ մենք միայն խօսել գիտենք և գրպաններս պինդ փակում ենք ազգային ինքնօգնութեան համար։

Չը գիտենք ով է եղել պ. Զալխուշեանի թղթակիցը, որին նա հաւատացել է. ով է եղել այդ թղթակիցը, որ կամեցել է պ. Զալխուշեանի սրամիտ գրչի միջոցով արդարութեան դէմ մեղանչելով անարգանքի սիւնին գամել մեզ։

Դեղած, հաստափոր, չորսը մի կօպէկ անգամ չարժող «կօնտօլ-խարներ» ամէն տեղ կան։ Թող պ. Զալխուշեանը մեղադրէ, նախատէ այդպիսիներին որքան կամենում է, բայց մի քաղաքի ամբողջ ժողովուրդ, որը մեծամասնութեամբ կարողացել է իր բարոյական պարտականութիւնը կատարել միշտ և իր ոյժերի ներածի չափ մասնակցել է նաև ազգային դպրոցական ֆօնդին, աւելի բարձր է կանգնած։

Ախալցխացիների հարստութեան մասին խօսելը միայն ծիծաղ է շարժում. գաւառական քաղաքների մէջ Ախալցխան յետամնացների շարքումն է առ այժմ. քաղաքացիների ստուար մեծամասնութիւնը արհեստաւոր կամ մանր առևտրականներ են, որ եթէ մի բան կարող են խնայել, դա էլ միմիայն չափազանց զուրկ ապրելուց է լինում։ Զաքուանը ձեռին, առաւօտից մինչև երեկոյ արիւն քրտինքով հաղիւ իր օրապահիկը վաստակող աշխատաւորն անգամ երբ մասնակցում է և իր սև փողը ձգում ազգային գանձանակը, այլ ևս քանակին չը պէտք է նայել. այդպիսիներից հաւաքված հարիւրների առաջ նսեմանում են հարուստի տուած հազարները, և հեգնանքն ու ծաղրը նրանց չէ որ պիտի ուղղվէր։

Ախալցխայում, շատ քիչ բացառութեամբ, ամէնքն էլ մասնակցած են դպրոցական ֆօնդի առիթով կատարված ժողովարարութեան և համամատական կերպով արդիւնքը աւելի լաւ եղած է քան թէ ուրիշ աւելի հայաշատ քաղաքներում. բայց մեր մեղքը եղած է երևի այն, որ ի լուր աշխարհի չենք տարածած, թէ մենք էլ մեր պարտքը կատարած ենք։

Ուղղեցէք ձեր սխալը, պ. Զալխուշեան։

Գ. Արարեան

Սուդեան (Շամախու գաւ.), 10 փետր.

Սուդեանի «Բուդաղեան-Վանական» երկդասեան դպրոցի ուսուցիչների և մի խումբ գիւղացիների նախաձեռնութեամբ առաջիկայ ապրիլի 20-ին տօնվելու է նոյն դպրոցի աւագ ուսուցիչ Մկրտիչ Ա.թաբէկեանի ուսուցչական գործունէութեան 40-ամեակը։

Յօբելեանական յանձնաժողովս, ընտրված նախաձեռնող գիւղացիների և ուսուցիչների կողմից, սրանով խնդրում է «Մշակի» խմբագրութեանը՝ թոյլ տալ ձեր թերթի միջոցով ազդարարել այդ մասին և դիմել յօբելեարի պաշտօնավարած ուսուցչական միջավայրերին, նրա հայրենակիցներին, բարեկամներին, ծանօթներին, պաշտօնակից ընկերներին և նախկին աշակերտներին, այլ և՝ մեր բոլոր կրթական-կուլտուրական հաստատութիւններին, հայ ուսուցչական ընտանիքին և այն բոլոր անձանց, որոնց սրտին մօտ է ժողովրդի լուսաւորութեան գործը, բարեհաճեն մասնակցել մեր հանդէսին, ով ինչպէս կուզենայ, ըստ իր բարեհաճ կամքի։

Գիւղում պօստատուն չը լինելու պատճառով, խնդրում ենք շնորհաւորանքներս ու հեռագիրներն ուղարկել մինչև ապրիլի

15-ը՝ այս հասցէով. г. Шемаха, Мисаку Мхитарянцу.

Նախագահ յանձնաժողովի՝
Միսակ Մխիթարեան
Քարտուղար՝ Գ. Կարապետեան

Ե. Գ.—Գաւառական թերթերին խնդրում ենք արտատպել մեր այս կոչը։

—

Ալէքսանդրօպոլ, 25 փետրվարի
Մեծ. պ. Ա. Երիցեան.

Ամսիս 12-ին «Մշակի» 32-րդ համարում իմ հացէին մի բաց նամակ էիք ուղղել և ինձ ընկերական դատի հրաւիրել։

Ես աւելորդ եմ համարում «Մշակի» էջերը զբաղեցնել և ձեր անտեղի յարձակումներին մանրամասն պատասխանել։

Փետրվարի 9-ին, համաձայն ձեր թախանձանքին, ինչ կանչել էր պ. Մզաբէուլով փաստաբանը, օրին յայտնեցի, թէ ես պատրաստ եմ գործը յանձնել միայն միջնորդ դատարանի, բաղկացած երեք փաստաբաններից։ Բայց դուք չուզեցիք և ընկերական դատ էք պահանջում։

Եթէ համաձայն էք ընկերական փոխարէն միջնորդ դատարանի, ես կը դամ թիֆլիս, նստարի միջոցով գործը յանձնենք միջնորդներին և նրանց վճռին խոնարհվենք։

Միայն՝ նստարական գրի կազմելուց առաջ, դուք պէտք է ներկայացնէք ընկերութեան գանձարանը մակէէրների և դատարանի համար տարածդ շուրջ 3600 ռուբլին, որոնք դեռ ձեր վրա են մնացել, և պիտի ներողութիւն խնդրէք մեր միւս ընկեր Մելիք-Մինասեանից, որին գանկոծեցիք և գլուխը ջարդեցիք 1912 թ. նոյեմբերի մէջ։

Ես Թիֆլիս կը լինեմ ամսիս վերջին։

Սարգ. Մուրադեանցեան

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թիֆլիս, 22 փետր.

Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի վերատեսուչը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Պաւել Պետրովիչ Բէժանբէկին, որը նուիրել է դպրոցին մի դաշնամուր (концертный рояль)։

Պաշտ. վերատեսուչ՝ Ե. Խունդուզ

—

Հայուհեաց Որբանոցի Ընկերութիւնը խնդրում է ասել, որ ինքը շնորհակալութեամբ ստացել է տ. Նադէժդա Շադինեանից 15 ռ. ի յիշատակ հանգուցեալ Ալէքսանդր Յովսէփեան Քիշմիշեանի։

—

Հայուհեաց Որբանոցի Ընկերութեան վարչութիւնը խորին շնորհակալութիւն է յայտնում տ. տ. Ն. Ալիբէկեանին և Ս. Աբգարեանին, որոնցից առաջինն ի յիշատակ իր մօր՝ տ. Մ. Խաչիկեանի նուիրել է 40 ռ., իսկ երկրորդը՝ 10 ռ. ի յիշատակ իր քրոջ։

—

Թիֆլիս, 26 փետրվարի

Նորաշէնի Մարիամեան օրիորդաց ուսումնարանի չքաւոր աշակերտուհիների օգտին ստացել է հանգուցեալ Ալ. Ե. Քիշմիշեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն 1) Նատալիա Կրասիլնիկեանից 30 ռ., 2) Թիֆլիսի Ժողովարանի վարչութիւնից 25 ռ., 3) Նորաշէնի Մարիամեան ուսումնարանի ուսուցչ. կազմից 15 ռ. և 4) գնդապետ Ստ. Սուսանեանից 10 ռ.։

Զբաւոր աշակերտուհիներին խնամող վարչութիւնը յայտնում է նուիրատուներին իր խորին շնորհակալութիւնը։

Նախագահ վարչութեան՝
Սարգիս ա.-ք. Շիրյանց

—

Թիֆլիս, 25 փետր.

Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է հետևեալ նուէրները.

1) Թիֆլիսի Ժողովարանից, ի յիշատակ հանգուցեալ Ալ. Քիշմիշեանի, Ընկերութեան ձրի և էժանագին ճաշարանի օգտին՝ 25 ռ., 2) պ. պ. Նիկ. Մատինեանից 898 կոտ հայերէն գրքեր, 3) Սամս. Ցարութիւնեանից 52 կոտոր գիրք, 4) Լ. Մելիք-Ադամեանից 8 կոտոր, 5) Ն. Աբէլեանից և Ռ. M. T.-ից 1-ական գիրք։

Վերոյիշեալ նուիրատուներին խորհուրդս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Խորհուրդ

—

Հին-Ղրիմ, 17 փետր.

Շնորհակալութիւն ենք յայտնում այն մի խումբ նուիրատուներին, որոնք ի միջի այլ դպրոցների չեն մոռացել և մեր անտեսապէս ամխիթար դպրոցը, ուղարկելով այս տարվայ «Մշակը»։

Ի դիմաց հոգաբարձութեան
Երէցփոխ՝ Ե. Յովհաննիսեան

—

Թիֆլիս, 24 փետր.

Հաւլաբարի էջմիածնեցոց օրիորդաց ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը յօգուտ իր խնամքին յանձնված դպրոցի Ցակ. Դանիելեանից ստացել է նուէր 25 ռ., որի համար և նուիրատու պարոնին յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Նախագահ հոգաբարձութեան՝
Վ. Ղարիբեան

—

Թիֆլիս, 26 փետր.

«Մեղու» աշխատանքի տան վարչութիւնը ստացել է նուէր Թիֆլիսի Ազնուականների Բանկի վարչութիւնից 100 ռ. ի յիշատակ հանգուցեալ Ս. Փրկչեանի, որի համար յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Վարչութիւն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՕՄՐՈՒԼԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

—

Համայնքների պալատի նոր նստաշրջանին վիճակված է լուծել մի պրոբլեմ, մի խնդիր, որը 27 տարիների ընթացքում զբաղեցրել է ոչ միայն Անգլիայի հասարակական կարծիքը, այլ և գրաւել է ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան ուշադրութիւնը։ Դա հօմրուլի խնդիրն է, Իրլանդիայի ինքնավարութեան հարցը։

Մինչ Անգլիայի հեռաւոր գաղութները լիակատար ինքնավարութիւն են վայելում, մայր երկրին կից Իրլանդիան, որը մի ժամանակ ունեցել է իր սեփական պարլամենտը, ահա տասնեակ տարիների ընթացքում մաքառում, կռւում է իր իրաւունքների վերականգնման, քաղաքական ինքնավարութիւն ստանալու համար։ Հօմրուլի նպատակն է ստեղծել սեփական, իրլանդական պարլամենտ Դուբլինում և պատասխանատու գործադիր մարմիններ, իր ներքին գործերի ինքնուրոյն կառավարութեան իրաւունքով։ Իսկ այն հարցերը, որոնք կապված են ամբողջ պետութեան շահերի հետ, պէտք է ենթարկվեն կենտրոնական, այսինքն բրիտանական պարլամենտի իրաւասութեանը։

Քաղաքական ինքնուրոյնութեան շարժումը Իրլանդիայում սկսվեց դեռ 70-ական թւերին. սկզբում հազիւ նշմարելի, տարիների ընթացքում նա լայն ծաւալ է ընդունում։ Առանձին զարկ է ստանում հօմրուլիների կուսակցութիւնը անգլիական պարլամենտում Պարնելի օրով, որը 80 թւին ընտրվում է այդ կուսակցութեան պարագլուխ։ Այդ ժամանակ հօմրուլականների թիւը պարլամենտում հասնում է 85-ի։ Այդ կուսակցութիւնը ձեռք բերից իրլանդացիների վստահութիւնն ու համակրանքը։ Նամանաւանդ այն ժամանակից, երբ Պարնելը կապեց քաղաքական ռեֆորմների հարցը հողային ռեֆորմների հետ։ Ինչպէս յայտնի է, Իրլանդիան չափազանց աղքատ երկիր է. ժողովուրդը կապալով է առնում հողը անգլիական կալուածատէրերից. վերջինները հարստահարում են իրլանդացի գիւղացիներին։

80-ական թւականներում հօմրուլականները աշողվեց գրաւել Գլադստոնի ուշադրութիւնը Իրլանդիայի ինքնուրոյնութեան հարցով։ 1886 թւին, առաջին անգամը, Գլադստոնը հօմրուլի բիլը մացրեց անգլիական պարլամենտը, բայց աշողութիւն չունեցաւ։ Այնուհետև երբ 1892 թ. կազմակերպվեց Գլադստոնի նոր մինիստրութիւնը, նա իր ծրագրի մէջ մացրեց հօմրուլի բիլը, իսկ 1893 թ. այդ բիլը առաջարկվեց համայնքների պալատին։ Գլադստոն արտասանեց մի փայլուն ճառ. նա ասաց, որ Իրլանդիայի ինքնավարութեան բիլն ընդունելով միայն կարելի է վերականգնել Անգլիայի պատւի և նրա քաղաքական հանճարի արատաւորված անունը։

Հօմրուլի բիլը Գլադստոնի մինիստրութեան ժամանակ, երեք ընթերցումներին էլ, ընդունվեց համայնքների պալատում, բայց ամեն անգամ տապալվեց լորդերի պալատում։

Այժմ դրութիւնը փոխվել է։ 1911 թւից լորդերի պալատը կորցրեց իր veto-ի իրաւունքը. այժմ նա կարող է միայն ժամանակաւորապէս ձգձգել համայնքների պալատի որոշումները։ Եթէ մի օրինագիծ երկու տարվայ ընթացքում երեք անգամ ընդունվում է համայնքների պալատում և մերժվում լորդերի պալատում, միևնոյն է, նա ընդունված է համարվում և ներկայացվում է ի հաստատութիւն թագաւորի, ուրեմն օրէնք դառնում. որովհետև անգլիական դահի իրաւունքները, պրերոգատիվը, վաղուց են զրօյի հաւասարեցված։ «Le roi règne, mais ne gouverne pas»,—կարելի է ասել անգլիական սահմանադրական թագաւորի մասին։ Համայնքների պալատը, ժողովրդի ներկայացուցչութիւնը, ուրեմն, որոշում է հարցը։

Ահա այս պայմաններում անգլիական պարլամենտի ներկայ նստաշրջանին վիճակված է լուծել Իրլանդիայի ինքնավարի հարցը։ Համայնքների պալատում երրորդ անգամ պէտք է քննվի հօմրուլի օրինագիծը, որը արդէն երկու անգամ մերժվել է լորդերի պալատում։ Ուրեմն եթէ հօմրուլը երրորդ անգամ ընդունվի ներքին պալատում, նա օրէնք կը դառնայ։

Իրերի այս դրութիւնը մեծ իրարանցում է առաջացրել թէ ներքին պալատի պահպանողականների շրջանում և թէ գլխաւորապէս վերին պալատում։ Ցուզվում, ազատվում է և Ուլստերի ազգաբնակութեան մեծամասնութիւնը, այսպէս անուանվող Օրանժիստները, որոնք Իրլանդիան նուաճողների և անգլիական գաղթականների սերունդներն են։ Նրանք մինչև այժմ էլ բողոքական դաւանութեան են պատկանում, մինչդեռ ընդհ. իրլանդացիները, որոնք կազմում են երկրի աւելի քան 75%, կաթոլիկներ են։ Ուլստերացիները այն աստիճան հակառակ են Իրլանդիայի ինքնավարութեանը, որ սպառնում են հօմրուլը ընդունելու դէպքում զինաւորված ապստամբութիւն բարձրացնել, քաղաքական պատերազմ յայտարարել։ Այդ նպատակով նրանք զինվում պատրաստվում են, զինավարժութեամբ են պարապում։

Նախազգալով որ Իրլանդիայի աւտոնոմիան իրականանալու վրա է, որ հօմրուլը կանցնի ներքին պալատում, պահպանողականները կուսակցութիւնը դիմեց մի ուրիշ միջոցի ևս։ Վճռեցին զանական ճանրն իրանց պատասխանատուներում ուղղում մտցնել այն մտքով, որ նախքան հօմրուլի օրինագիծը վերջնական քննութեան ենթարկելը՝ անհրաժեշտ է դիմել երկրին, դնել այդ հարցը ժողովրդի քուէարկութեանը, այսինքն արձակել համայնքների պալատը և նոր ընտրութիւններ նշանակել։ Համայնքների պալատը մերժեց այդ ուղղումը 87 ձայների առաւելութեամբ. մինչդեռ լորդերի պալատում այդ ուղղումն ընդունվեց. լորդերի պալատը այդ ուղղումի մէջ ասում է, որ անհնարին է իրականացնել մի այնպիսի լուրջ սահմանադրական ռեֆորմ, ինչպիսին հօմրուլն է, առանց ենթարկելու նրան համազգային ձայնատուութեան, և ցաւ է յայտնվում, որ գահական ճառում չէ յիշատակված նոր ընտրութիւններ նշանակելու մասին։

Լորդերի պալատը պահանջում է համայնքների պալատի արձակումը։ Մի ուրիշ այդպիսի օրինակ եղած չէ անգլիական պարլամենտի նորագոյն պատմութեան մէջ։ Եթէ պահպանողականները վստահանում են խախտել պարլամենտական արգելքները, դա ապացոյց է, թէ որ աստիճան լարված է այժմ սահմանադրական կռիւը։ Իսկ թէ ինչով կը վերջանայ այդ կռիւը, ցոյց կը տայ մօտակայ ապագան։

Ս. Դ.-Բ.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Կ. Պոլսից հեռագրում են, որ Արզրումում ընտրված 15 պատգամաւորներից 18-ը պատկանում են օպոզիցիային։ Նրանց թիւումն է նաև յայտնի ազիտատոր Ֆալիք-Բէյը։

✦ Պարիզում պրինց Սաբահ-Էդդինը ամեն կերպ աշխատում է փոխառութիւն ինքել Թիւրքիայի համար։ Սակայն նա վճռել է նոյնիսկ ամիստիայի դէպքում Թիւրքիա չը վերադառնալ։

✦ Պարիզի «Revue Scientifique»-ը պրոֆ. Օսմանի դեկավարութեամբ տուրիստների ճանապարհորդութիւն է կազմակերպում դէպի Կովկաս և Միջին Ասիա։

✦ Կլեմանսոն գերմանական մամուլի արշաւանքի մէջ նկատում է սպառնալիք Ռուսաստանի հասցէին, որպէսզի սա հրաժարվի Ֆրանսիայի դաշնակցութիւնից։ Կլեմանսոն պարլամենտից պահանջում է չը խնայել նորանոր գումարներ սպառազինման համար։ Ռուս-ֆրանսիական դաշնակցութիւնը, Կլեմանսոյի կարծիքով, կը մնայ անսասան։

✦ Բերլինից հեռագրում են, որ մամուլի արշաւանքը Ռուսաստանի դէմ նորից վերսկսվեց։ Լրագիրները բացարձակ գրում են. «1915 թ. պատերազմն անխուսափելի է, և մենք պէտք է պատրաստվենք նրա համար»։

✦ «Berl. Tageblatt» յորդորում է Աւստրիային և Գերմանիային անյապաղ վերջ դնել Ռուսաստանի անսահման պահանջներին, թէկուզ դրա համար անհրաժեշտ լինի զէնքի դիմել։

✦ Կ. Պոլսից անակնկալ մեկնեց Տուրխան-փաշան։ Նա նշանակվելու է Ալբանիայի պրեմիէր։ Այդ հարցը վճռվել է Պետերբուրգում պրինց Վիդի եղած միջոցին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միկոսեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմիոնովսկայա փող., № 18 (Զօրանոցների արձանի մոտ) առանձնապէս հիւանդների համար յարմարեցված բնակարանում։ Բժշկի բնակարան Սեմիոնովսկայա, № 16.
(Հ.տ.հ.) 804. 100—60

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտովսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեքտրոթերապիա։ Ընդունելութիւնը առաւ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։ Տէլէֆոն № 388.
(ա. օ.) 112. 100—15

Փակաս-մեխանիկակ
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
ՉԱՅՐՎՈՂ ԴՐԻ ԱՄԱՐԿՆԵ
ՎԵՐՆԵՐ ՊՊԷՏՅԼ
Վօկզալնայա փ. № 3.
(օ.մ.) 100. 100—9

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ԾԻՕԱՂԻ ՏԿՃՈՐ“
Ընկերոջների և սրախօսութիւնների ուժ-նաբէդզնի ընտիր տաւարների ժողովածու։ Գրքի երեսին այս նկարը մեծ գիրքով։ Գինն է 20 կոպ.։ Դիմել Թիֆլիսի հայ գրավաճառներին և կամ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. А. Г. Есаянцу. Գրքի գինը և ճանապարհի ծախսը 9 կոպ. մարքաներով ուղարկել առաջուց։ Դուստրով ուղղողներին 100 հատը էլ գնով, այսինքն 50% զեղչ. 50 հատին 40% զեղչ. 25 հատին 30% զեղչ։ Ճանապարհածախսը գնողի վրա։ Դուստրով ուղղողները պէտք է գրեին կանխավճար, մնացեալը վերադիր վճարով։
(օ.մ.) 29. 20—19

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ Է
ՏԻԳՐԱՆ ՉԻԹՈՒՆԻՒ
ՄԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ-Ը
Հայ Բնաշխարհի կեանքէն 15 ինքնատիպ դրուագներ։
Գինը 50 կոպ. կամ 6 ղրուշ։
Դիմել՝ «Գուտտենբերգ» և «Գիր» գրավաճառաց։ Կենտրոնատեղի՝ Կ. Պոլիս, Զատիկ մաքսբլար Սեպուհեան Խան № 33, հեղ. Նակին քով։
(օ. մ.) 153. 5—4

ՇՆՈՐՀԱԿԱԼ· ՄԻ ՔԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ
Մեծ. Պ.. Թոյլ տուէք անկեղծօրէն շնորհակալութիւն յայտնել Ձեզ Ձեր «հրաշագործ Գիւտի» համար։ Ձեր «ՄԻԳՐԻԶՆՕ-ՆԵՐՎՈԶԻՆԸ» ազատում ինձ սարսափելի տանջանքներից... Ցարգանքով Ռէբդիայով. Նովգորոդ։
Մեծ. Պ... Ձեր «ՄԻԳՐԻԶՆՕ-ՆԵՐՎՈԶԻՆ» դեղափոշին ներկայացու **սմենահրաշալի դեղը**, և կողմնակի երևոյթներ չէ առաջացնում. այդ պատճառով էլ համոզեցաք պիտի օգտվում նրանից իմ գործունէութեան ընթացքում։ Կամենէց-Պոդոլսկ. բժ. Վ. Ընկանդրովիչ։
Մեծ. Պ... Ցայտնում եմ իմ **խորին օգնորհակալութիւնը** Ձեր «ՄԻԳՐԻԶՆՕ-ՆԵՐՎՈԶԻՆ» դեղափոշու համար։ Այժմ ինձ միանգամայն առողջ եմ զգում։ Ցարգանքով Ի. Ս. Սկվորցով. Բոտով Դ./վ.։
Մեծ. Պ... Ձեր «ՄԻԳՐԻԶՆՕ-ՆԵՐՎՈԶԻՆ» դեղափոշին **հրաշալի ազդեցութիւն** է անում։ Իմ մայրը և ես այդ դեղամն ենք ազատվում մեր սարսափելի հիւանդութիւնից։ Ստավրից քաղ. Կէլէկի նահ., Ս. Ի Ժիլեանվա.
Մեծ. Պ... Պաշտօնակիցներիս և իմ կողմից յայտնում եմ Ձեզ **արտագին** շնորհակալութիւն Ձեր հրաշագեղ «ՄԻԳՐԻԶՆՕ-ՆԵՐՎՈԶԻՆԻ» համար։ Օգէս. Ի Փոխ. Վարկի Ընկ., Ցարգանքով Ս. Դամալէյ։
Մեծ. Պ... Ձեր «ՄԻԳՐԻԶՆՕ-ՆԵՐՎՈԶԻՆ» դեղափոշին ամենալաւ դեղն է համարվում։ Դ-ր Ե. Ֆ. Վարցէն. Վարշավա։
Գարրիկ փաթեթներով ուղ. է դրիչը. Апт. г. Гонсецкій, г. Плоцкъ, с/д.
(В. 54167) 11—8

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ
„ՆՈՐ-ՀՈՍԱՆՔ“
1914 փետրվար № 2.

1) Ազատութեան արշալոյսին.—Արաս, 2) Ես լսում եմ... (բանաստ.)—Լէյլի, 3) Ինձ թւում է... (բանաստ.)—Լէյլի, 4) Գաղտնի ատիկան—Ռէն, 5) Ես աղօթում եմ... (բանաստ.)—Արմենուհի Տիգրանեան, 6) Զորափէն—Մ. Արազեան, 7) Երգներ և ճառագայթներ (Վիկտորիա Ագանուր)—Արբէն Երկաթ, 8) Ցուշեր Տաճկա-Հայաստանի ճանապարհորդութիւնից—Ա.-Դօ, 8) Քննադատական փիլիսոփայութիւն (Իսմի Վերկ. տայութիւն)—Ֆրանգեան, 10) Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, 11) Աշխարհագրութիւն և աշխարհիկ գրականութիւնը մինչև Ժ. Արզումեան—Մարտ. Ցարութիւնեան, 12) Սանդիսալ Պշիբշեվսկի—Սուրխաթեան, 13) Աւետիք Արաստանեան—Արբէն Տէրտէրեան, 14) ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ—1) Bibliotheca armeno-georgica II վիճակն տարբերը ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեց Կ. Կոստանեան—Ն. Ադրաեան, 2) Ոսկէ աղբիկը. ռուս. թ. Լ. Մելիք-Ադամեան.—Սպիտակ տառեղնիկը—Ն. Տելիշովի, փոխադր. օր. Ն. Գրիգորեան.—Ակ-Բոգատ—Գ. Ն. Մամին-Սիբիրեակի—ռուս. թ. Ս. Թորոսեան—Մ. Ս., 3) Լուսադէմին—գրական ժողովածու I գրքոյկ—Մ. Ս. 4) «Заветы» ամսագրի քննադատականը Ե. Ֆրանգեանի գերմաներէն գրքի մասին։ 15) ԹԻՒՐՔԻԱ—Տաճկական ռեֆորմները—Ռուբէն, 16) ԳԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿՈՆ—Աւետիք Տէր-Պողոսեան, 17) Խմբագրութեան կողմից, 18) Գրքեր և պարբերականներ, 19) Բովանդակութիւն և յայտարարութիւններ։

ՊԱՏԿԵՐՆԵՐ՝ Սանդիսալ Պշիբշեվսկի։

Շարունակվում է 1914 թ. բաժանորդագրութիւնը

ԲԱԺԱՆՈՐԱԳԻՆԸ՝ Ռուսաստան—տարեկ. 7 ռ. կէս տարվ. 4 ռ. երեքամսվ. 2 ռ. 25 կ.
Արտասահման » 24 ռ. » » 14 ռ. » » 8 ռ.

Դրամ և նիւթեր ուղարկել հետևեալ հասցէով. Тифлисъ, Редакція «Норъ-Осанкъ», Сергіевская № 14. Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase) Rédaction de la revue «Nor-Hossank».

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է № 3-Ը

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:
(կ.հ.) 182. 3—1

ԻՆԺԵՆԵՐ
Ի. Ս. ՊՕՆԴՈՅԵՎ
— ԹԻՖԼԻՍ —
Ելիզավետինսկայա, 164, անկիւն Բակինսկայա փ.
— Տէլէֆոն գրասենեակի № 123 —
ԵՐԿԱԹԵ ԳԵՐԱՆՆԵՐ
ԿԱԹՍԱՅԻ ԵՐԿԱԹ
ԱՆԿԻՒՆԱՅԻՆ ԵՐԿԱԹ
ՏԱՆԻՔԻ ԵՐԿԱԹ
(սեւ. եւ ցինկով պատած)
Ցենուրիւնների համար աղիւս՝ Վակեում գտնվող աղիւսի սեփական գործարանից։
ՑԷՄԷՆԷ, ասֆալտ, գուդրոն, կրակի դիմացող աղիւս եւ կաւ, մխեր, ամեն չափի եւ այլ ճիւրեղէն օգնուր. համար։
(14,28) 34. 32—4

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է Թիֆլիսում միակ ռուսերէն լեզուով լոյս տեսնող, ԱՄԵՆԻՒՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ, բժշկական ամսագիր
„ЖУРНАЛЪ-ЛЕЧЕБНИКЪ“-Ի
1914 թ. բաժանորդագրութիւնը.

Ամսագրի նպատակն է՝ հիւանդութիւնների նախազգուշացումն և առողջութեան պահպանումն։

Ամսագրի մէջ, յայտնի բժիշկների աշակցութեամբ, պարզ և հասկանալի լեզուով բացատրվում է այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է առողջութեան և կեանքի երկարացման համար։

Բաժանորդագինն է ամբողջ տարվայ համար 3 ՊՐԵՄԻԱՑՈՎ 2 ռ.։

1-ին պրեմիան պատի գեղեցիկ «Օրացոյց բժշկարան» 1914 թ., իսկ 2-րդ և 3-րդ պրեմիան բաժանորդների ցանկութեան և ընտրութեան համաձայն կուղարկվեն 2 հատ հետևեալ գրքերից. 1) Домашній лечебникъ (առանձին արժէ 1 ռ.), 2) Грѣхи молодости (лечебникъ секр. болѣзней 1 р.), 3) Лечебникъ домашнихъ животныхъ (1 р. 25 к.), 4) Искусственное безплодіе (1 р. 25 к.), 5) Самоучитель гипнотизма (2 р.), 6) (Полный дѣловой письмовникъ (1 р.), 7) Поваренная книга для хозяекъ (1 р.). Պրեմիանները պատրաստ են և կուղարկվեն բոլորովին ձրի լոյս տեսած համարների հետ՝ բաժանորդագիրը ստանալուց անմիջապէս։

Բաժանորդագրվել կարելի է և վերադիր վճարով՝ (налож. плат.) 20 կ. աւելի արժէքով, այսինքն բաժանորդները վճարում են պօստին պրեմիաները ստանալուց 2 ռ. 20 կ.։

Հասցէն՝ Тифлисъ—М., Вознесенская ул. № 8, главная к-ра ред. „Журналъ-Лечебникъ“. Թիֆլիսում բաժանորդագրութիւնը ընդունվում է նոյնպէս և կենտրոնական գրասենեակում։
(կ. չ. ու.) 165. 10—7

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՄԱԶԵՐԻ ՆԵՐԿ
ԸՆԿՈՒԶԵԱՑ ԷԿՍՏՐԱԿՏԻՑ
Ֆ.4711.
ՖԷՐԴ. ՄԻԼԳԻԷՆՍ
Պարֆիմերիա № 4711.
ԿԵՕԼՆ—ՐԻԳԱ.
Հիմն. 1792 թ.
Մատակ. Ն.Պ.Մեծ. Դքսն Յանվում է ամենուրեք։
այն առաւելութիւնն ունի, որ նա միանգամայն անվնասակար է։ Ներկում է սպիտակ, շէկ և ամեն գոյնի մազերը արագ և հիմնաւոր կերպով։ Իւրաքանչիւրը կարող է № 4711 ներկով իր մազերին տալ նրանց նախկին, բնական գոյնը։
Գործածելու եղանակը կցված է իւրաքանչիւր սրուակին։ Ծախվում է թէ սև, թէ շագանակագոյն, թէ մութ և թէ բաց-խարտեաշ գոյներով։
1 սրուակը 1 ռ. 20 կ. և 2 ռ.։
(М. 544854) 8—5

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный